

РД. З. РУДИССИН

НОВАНОГ
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ԿԱԶՄԱԿԵՐՊԵՑԵՔ
ՄԱՆԿԱՑՄՈՒՐԵՔ
ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԳՐԱԾ 50 գր.
Цена 50 գր.

613.9

Բ-30

ՀՐԱՄԱՆԱԳՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
010204-900

1987

613.9

R-30

ՀԵԿԵՐ

Հուսիկ Տեր - Դանիելյանի
ամենատարածված հիմասակին
ՀԵԿԵՐ

СА 449

ԲԺ. Հ. ԽՈԽԱՉՅԱՆ

20 JUL 2010

ԿԱԶՄԱԿԵՐՊԵՅԵՎ ՄԱՆԿԱՑՄԱՆԻՐՆԵՐ ԿՈԼՃՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ

Института
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

Հնգամյակը չորս տարում կատարելու վճռական ձականական բուռնությունը կնոջ աշխատանքն արդյունաբերության մեջ գործադրելու խընդիրը լուրջ և պետական և զառնում:

Դործադրվության վերացումը, կնոջ աշխատանքի մասուայական գործադրումը արդյունաբերության մեջ, խորհանեսություններում և կոլտնտեսություններում Խորհրդային Միության աշխատավոր կնոջ տուաջ բաց են անում լայն ճանապարհներ միանգամայն և վերջնականապես դառնալու սոցիալ-տնտեսապես աղատ և ինքնուրույն:

Սոցիալիստական ծավալվող շինարարությունը կանանց մեջ ամրացրեց ստեղծագործական յեռանդ և բուռն վոգեվորություն՝ անմիջապես մասնակցելու սոցիալիստական հսկա շինարարությանը:

Մեր յերկրի շինարարության նվաճումների մեջ կանանց մասնակցությունը մեծ է: Նրանք մետաղագործության մեջ մասնակցում են 44%-ով, քիմիայի—54%, մանածագործության—57%, թղթագործության—59%, մետաղագործության հարվածային բրիգադներում—34%:

Հյուսիսային Կովկասում մինչև հունվարի մեկը 1931 թ., արդյունաբերության մեջ մասնակցում են 23% հունվարի մեկին 32 թ.—34%:

Մեր արդյունաբերության վճռական մոմենտներում, շինարարության մեջ յեղած ձեղքվածները վերացնելու մեջ աշխատավոր կանանց մասնակցությունը նույնպես մեծ է յեղել: Բանվոր կանանց կամավոր բրիգադները շաբաթորյակներ կազմելով, հաճախ հաջողությամբ են վերացրել ֆարբիկների և գործարանների արտֆինալանի ձեղքվածքները:

Այդ բոլոր փաստերը ցույց են տալիս, վոր կինը ակտիվ կերպով մասնակցում է պրոլետարիատի առաջին շարքերում մեր յերկրի տնտեսության սոցիալիստական հիմքի կառուցմանը:

Կինը ակտիվ կերպով մասնակցում է նոր ֆարբիկների և գործարանների շինարարության ժամանակին ավարտելուն և մեծ վոգեվորությամբ և կատարում այդ աշխատանքը:

Արդյունաբերական նոր հսկաների շինարարությունը պահանջում է միլիոնավոր կանանց մասնակցությունը:

ՀՀ-88918

Հենինն ասել ե՝

«Սոցիալիստական հետեւության կառուցումը կարելի լի զլուխ բնույթի միայն այն ժամանակ, յեր ամբողջ մեր հսկա յերկրում փախանակ հարցուր կանոնց՝ կմասնակցեն միխնավոր կանոյք»:

Արդյունաբերության և շինարարության մեջ կանանց աշխատանքի գործադրության հետ զուգընթաց, մեր առաջ ծառանում և սոցիալ-կենցաղային հիմնարկությունների հարցը, վորոնք իրենց հերթին ազատում են բանվորունուն, աշխատավոր կնոջը, կոլտնտեսունուն տան մասը հոգսերի ծանրությունից, յերեխաների հոգսից, հնարավորություն տալիս նրան մասնակցելու ինչպես արտադրական աշխատանքներին, նույնպես և հասարակական աշխատանքներին:

Կանանց կաղըերի մասսայական ողտագործությունը շինարարության մեջ պահանջում և ամենակորուկ և վճռական կերպով ծառավակուրու մոր և մանկան խնամող հիմնարկությունները, առաջի հերթին մանկամատըները։

Հյուսիսային Կովկասի հայ աշխատավորությունը հետ չի մնում սոցիալիստական շինարարության ասպարիգում Հյուսիսային Կովկասի բաղադրեցու բանվորական բրիգադների մեջ աշխատելով։

Հայ աշխատավոր կինը մասնակցել է և մասնակցում և Հյուսիսային Կովկասի արդյունաբերական հսկաներում—Մելաշում, Կարսի Ակսայում, Տրամվայում, Միկոյանի գործարանում, Պետական ծխախոսագործարանում, խորհրդային տնտեսություններում և կոլտնտեսություններում։

Վարպեսի հնարավորություն տրվի աշխատավոր կանանց առանց տան յերեխաների մասին հոգալու, ել ավելի մեծ չափերով մասնակցելու հասարակական աշխատանքներին և արտադրական աշխատանքի հարգածային բրիգադներին, անհրաժեշտ ե, վոր մեր յերկրամասի կոլտնտեսություններն իրենց արդիքինալիքնի մեջ մտցնեն մանկամատըների, ճաշարանների, իոնանոցների, հացթուխարանների կազմակերպումը և զրական կերպով նրանց իրականացնեն կյանքի մեջ, ապահովելով գրանով կանանց բուռն մասնակցությունը մեր յերկրամասի սոցիալիստական շինարարության նոր հաղթանակներին։ Այդ տեսակետից ընկ. Բառաշյանի սույն զրքույկը մի լավ ձեռնարկ և կոլտնտեսականների համար։

Հ. Ա.



61083.67

1

ՄԱԿԱՍՏՈՒՐՆԵՐԸ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԽՈՐՀՐԴՆԵՐԻ ՅԵՐԿՐՈՒՄ ՍՈՑԻԱԼԻԶՄ ԵՆՔ ԿԱՌԱՒԻՑՈՒՄ

Խորհրդների յերկրում բանվոր դասակարգն աշխատավոր գյուղացիության հետ Կոմկուսի ղեկավարությամբ կառուցում և սոցիալիզմ։ Հնդկամյակը չորս տարում—դա արգեն իրական փաստ ե, անգամ մեր թնամինները ստիպված են ընդունել Այն ըովելին, յերբ մեր յերկրում արդյունաբերությունը հսկայական չափերով աճում ե, նույն ժամանակ, մեր սահմաններից գուրս, կապիտալիստական յերկրներում որեցոր ու քանի զնում քայլայիսում և տնտեսությունը։ Որեց-որ բարոր կապիտալիստական յերկրներում աճում և գործադրկությունը։ Միլիոնավոր աշխատաղ ձեռներ մնում են առանց աշխատանքի, շատերն առանց կտոր հացի։ Միլիոնավոր գյուղական տնտեսություններ, անտառների տուրքերի հնորհիվ քայլայիսում են, և նետվում գործազուրկների շարքը։

Կապիտալիստների հիմքը բազմապիսի ճեղքածքներից ավելի ու ավելի թուլանում ե։ Կապիտալիստական աշխարհը տնտեսական ճզնածամի չտեսնաված տագնապ և ապրում։ Բանի զնում կապիտալիստական յերկրների միջև հակասությունները խորանում են։ Խորանում են նաև հակասությունները կապիտալիստական և գաղութային յերկրների միջև։ Կապիտալիզմը ընկել ե անել գրության մեջ։ ճիգ և թափում, բայց չի ել կարող զուրս զալ այդ գրությունից։ Փնտում և յելք։ Մի կողմից ել ավելի հարձակվում է իր յերկրի պրոլետարիատի վրա, վորի հաշվին ուզում և լուծել յուր խնդիրը։ Զի կարող հանդիսարարություն անայիլ պրոլետարիատի հայրենիք ԽՍՀՄ վրա։ Ամեն միջոցներ գործ և զնում հարձակվել ԽՍՀՄ-վրա, վոչչացնել նրա նվաճումները։ Կասկած անգամ չկա, վոր կապիտալիզմին դա վոչ մի զեպքում չի հաջողվում։ Հեռու չի այն որը, յերբ «կապիտալիզմի գերեզմանափոր պրոլետարիատը» նրան ցմահ հիմնահատակ կանի։

Այն ժամանակ, յերբ կապիտալիստական յերկրներում քայլայիսում և տնտեսությունը, աճում և գործադրկությունը, աճում ու խորանում հակասությունները, մեզանում, Խորհրդների յերկրում, արագ թափով կառուցվում և սոցիալիզմի շենքը, զարգանում և ու աճում յերկրի տնտեսությունը։ Մեզանում միանգամայն վերացվում և գործադրկու-

3

թյունը: Միության համայն աշխատավորությունը խանդավառ կատարում և յերկրի սոց-շինարարությունը, հնդամյակը իրազործում և չորս տարում:

Մեր տնտեսության վերելքը, յերկրի արդյունաբերության զարգացումն ու ինդուստրացումը պահանջում ե բանվորական նոր միլիոնավոր ձեռքեր: Աշխատավոր տղամարդու հետ միասին և քաղաքում և գյուղում աշխատավոր կինը ևս ներգրավվում ե յերկրի սոց-շինարարության: Միության սահմաններում աշխատավորումին վայելում և այն իրավունքները, վորով ոգտվում և աշխատավոր տղամարդը: Խորհրդային յերկրում կնոջ աշխատանքի համար բացված և լայն հարավորություններ:

Աշխատավորումին տնտեսության յուրաքանչյուր ասպարիզում տղամարդու հետ համահավասար իրավունքներով աշխատում ե: Խորհրդային իշխանությունն ամեն միջոցներ ձեռք և առնում կնոջ համար ստեղծել աշխատանքի ու կենցաղի համապատասխան պայմաններ, ինչպես քաղաքներում, արդյունաբերության ասպարիզում, այնպես ել գյուղերում—գյուղատնտեսության ասպարիզում, խորհ. ու կոլտնտեսություններում: Խորհրդային յերկրում, լայնածավալ Միության զանազան անկյուններում անում են նոր գիգանտներ—գործարաններ, Հարյուր հազարավոր տրակտորներ ծածկում են խորհ. ու կոլտնտեսուների դաշտերը: Անում ու բազմանում են խորհ. ու կոլտնտեսությունները:

Բանվոր դասակարգն ամենալուրջ կերպով ոգնում և աշխատավոր գյուղացիության կառուցելու գյուղում նոր, սոցիալիստական տնտեսություն:

Համատարած կոլեկտիվացման հիման վրա կուլակությունը վորպես դասակարգ, միանգամայն վերացվում է: Ներկա 1932 թվականին, առաջին հնգամյակի վերջին տարում, համատարած կոլեկտիվացումը հիմնականում ավարտվելու յի:

Բանվոր դասակարգը այս բոլոր հաջողությունները ձեռք և բերել ու բերում ե դասակարգային անողոք պայքարի պայմաններում: Խոչնդուսների, գժվարությունների, խանգարողների ու թշնամիների թիվը քիչ չե—կուլակը, տերտերը, զանազան տիպի ու տեսակի վնասություններ, աջ ու «ձախ» ուղղութունները, վերջապես, ամբողջ աշխարհի բուրժուազիան:

Մեր յերկրի բանվոր դասակարգը, լենինյան կուսակցության դեկավարությամբ, շատ գժվարությունների հաղթել ե, անկասկած հաղթելու յե և ապագայում:

Կատարված յեռուն ու հօկա աշխատանքի մոտից չի կարող հանգիստ անցնել աշխատավոր կինը՝ բանվորումին ու աշխատավոր գեղա-

կուհին: Աշխատավոր կինը մասնակցում է և պարտական և ել ավելի մասնակցել յերկրի սոց-շինարարության: Վարպեսզի աշխատավոր կինը կարողանա հարյուր տոկոսով ոգտավետ լինել սոց-շինարարության, նրան պետք ե ազատել ընտանիքի հոգսերից, տալ հնարավորություն նվիրվելու յերկրի վերակառուցման:

Հիմնական միջոցներից մեկը—ազատել աշխատավոր կնոջ ընտանիքի ավելորդ հոգսերից, կաղմակերպելով քաղաքներում, զյուղերում խորհ. ու կոլտնտեսություններում մանկածուրներ, հնարավորություն ատարով կոլտնտեսունակություն ակտիվ մասնակցելու կոլտնտեսությունների կաղմակերպման ու նրանց ամրապնդման:

II

ԿՈԼՏՆՏԵՍՈՒԴԻՆ ՍՊՅ. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԻՋՈՒՄ

Մեր յերկրի տնտեսության բոլոր վայրերում, աշխատանքի յուրաքանչյուր ասպարիզում—շտեսնված հաջողություն, աշխատանքի նոր ձեռք, աշխատանքի չտեսնված թափեր:

Յերկրի բուռն տնտեսական աճուրմը, արդյունաբերության զարգացումը, յերկրի ինդուստրացումը պահանջում են բանվոր ձեռքեր, լրացուցիչ աշխատավոր ձեռքեր: Հաղթելով բոլոր գժվարություններին, հաստատ ու արագ քայլերով առաջ են գնում ու տնտեսապես և կաղմակերպչորեն ամբանում կոլտնտեսությունները:

Կոլտնտեսությունների ամբանդման նպաստում ե ու ել ավելի պետք և նպաստի և կոլտնտեսության անդամ—աշխատավոր կինը: Կոլտնտեսությունների հաջողությունների զգալի տոկոսը կախված է նրանից, թե աշխատանքի այս ասպարիզում վճրան ակտիվ մասնակցություն ե ցույց տալիս կոլտնտեսության պլանի ըրիզ ու ժամանակին իրավուժման: Քիչ չեն կենցանի որինակներ, յերբ կոլտնտեսություններում աշխատավոր կանանց աշխատանքս ու ջանքով հաջողվել է 100% իրավուժել աշխատանքի պլանը: Անթիվ որինակներ վկայում են, վոր շատ անդամ ու շատ տեղերում կոլտնտեսություններում առաջինն աշխատավոր կանայքն են արձագանքում կուսակցության ու կառավարության առաջադրություններն ու հաջողությամբ կատարում վերջիններս: Հացամթերման աշխատանքների ժամանակ նրանք կաղմել են առանձին կարմիր գումակներ (օճօզա), իրենց գրական որինակով հացամթերման ու այլ աշխատանքների ժամանակ նպաստել են նրանց առաջինացման և ջախջախել կուլակի, տերտերի ու նրանց արբանյակների խարդախությունները:

Դաշտային աշխատանքի ժամանակ անցել են հարվածայինների շարքերը և ցույց տվել այս ասպարիզում կենդանի դրական որինակներ: Անա հիմնականում այն աշխատանքը, վոր կատարում ե մեղանում կոլտնտեսութիւնների ակտիվ մասսան, վորոնց թիվը խորհրդային տնտեսություններում և կոլտնտեսություններում յեզակի չե: Միայն կոլտնտեսային շինարարությունն աշխատավոր կնոջ կաղատի տնային ու ընտանեկան հոգսերից ու ստրկությունից, «կնոջ լրիվ ու իսկական աղատազրման, նրա ընտանեկան (տնային) ստրկությունից աղատվելու ճանապարհը բացվում ե (միայն), յերբ մանր, անհատական տնային տնտեսությունից անցվի խոշոր, համայնական տնտեսության գրում ե ընկեր լենինը:

Հին պայմաններում գեղջկուին խեղդվում եր աշխատանքի մեջ ընչազուրկ բատրակ ու միջակ ընտանիքի կինը, —մեկը մի քիչ ավելի, մյուսը՝ պակաս, ստիպված եր մասնակցել դաշտային բոլոր աշխատանքներին, հոգս տանել տնային կենդանիներին, թուշուններին և այլն: Այս բոլորին պետք է ավելացնել և յերեխաների հոգսը: Կնոջ վրա յեր ընկնում յերեխաների ամրող հոգսը—կրթելը, սնելը, դաստիարակելը և այլն:

Միանգամայն պարզ ե, վոր աշխատանքի նման կաղմակերպումը կարող չեր զրական տղղեցություն ունենալ տնտեսության վրա, նամանավանդ յերեխաների անման, զարգացման ու առողջության: Չե վոր յերեխաների հոգսը տարվում եր ի միջի այլոց, շատ անզամ նըրանք մնում եյին անխնամ: հետևանքը—զանադան հիվանդություններ ու մահացման գեղքերի զգալի տնկու:

Ցարիզմի ժամանակ յերեխաների, նամանավանդ սինչ մի տարեկան, մահացու դեպքերի տոկոսը շատ բարձր եր:

Խորհրդային իշխանության հաջողվեց բավական կարծ ժամանակա ընթացքում յերեխաների մահացու դեպքերի տոկոսը զգալի չափով նվազեցնել:

1913 թ. Մոսկվայի շրջանում մինչև մի տարեկան յերեխաների մահացու դեպքերի տոկոսը համառում եր 27,6 տոկոսի, նույն շրջանում 1923 թին զրա փոխարհին ունենք 13,7 տոկոս, Վիճակագրական տեղեկությունները շատ պարզ ցույց են տալիս այս ասպարիզում ունեցած զգալի հաջողությունները: Առաջ, 1910—13 թ. ամեն մի 100 մարդուց մեռնում եր 27 հոգի, ամեն մի 1000 յերեխաներից 275: 1905 թ. ամեն մի 100 յերեխաներից մեռնում եղ բանվորների յերեխաներից 19 հոգի, նարուստներինը—6 հոգի: 1909 թ. ամեն մի 100 յերեխաներից մեռնում եր բանվորների յերեխաներ՝ 24, հարուստներինը—4 հոգի: 1919 թ. ամեն մի 1000 յերեխաներից մեռնում եր 138 հոգի: 1928-ին ամեն մի 1000 մարդուց մեռնում եր 21 հոգի:

Յերկրի արդյունաբերության աճումն ու զարգացումը նոր աշխատող ձեռքեր են պահանջում: Խորհ. ու կոլտնտեսությունների բազմատեսակ ճյուղերի՝ կենդանաբուծության, թուչնաբուծության, կաթնատնտեսության, բանջարանոցների և այլ գյուղատնտեսական ճյուղերի զարգացումն ու աճումը պահանջում են հազարավոր բանվոր ձեռներ: Անա աշխատանքի լայն ասպարեզ, վորտեղ մասնակցում ե պետք և մասնակցի կոլտնտեսութիւններին: Աշխատավոր կինը պիտի կովի ու հաղթահարի բոլոր դժվարություններին, ծավալի աշխատանքի նոր ձեռներ—սոց. մրցումն ու հարվածայնությունը: Կոլտնտեսութիւնու վրա պարտականությունն ե ընկնում բացատրել պարզել, հասկացնել ու կոլտնտեսության մեջ քաշել այլ աշխատավոր, անհատական տնտեսություններ:

Կոլտնտեսութիւններին մասնակցում ե ու ել ավելի պետք ե մասնակցի հասարակական աշխատանքներին, անգրագիտառության ու կիսագրագիտության վերացման, կուլտուրական հեղափոխության խորացման և այլն:

Բացի մի շարք հաջողություններից, կան գեռ մեծ բացեր, մի շարք թիրություններ, քիչ չեն և դժվարությունների քանակը: Բանվոր գասակարգն աշխատավոր գյուղացիության հետ միասին վերացնում ե բացերը, հաղթում ու հաղթահարում դժվարություններին: Առարացնել ու ամբապներ խորհ. ու կոլտնտեսությունները, կիրառել ու իրականացնել կուսակցության ու իշխանության հրահանգներն այս ասպարիզում—անա թե ինչ խնդիրներով ել ավելի զբաղվելու յեն խորհ. ու կոլտնտեսականները:

Կոլտնտեսության մեջ չկա մի ասպարեզ, վորով շահագրգոված մինի կոլտնտեսության անդամ աշխատավոր կինը: Դա միանգամայն հասկանալի յեւ Կոլտնտեսության ամբողջ ինչքը ու ունեցմածքը կուլիտիվինն ե, ամենինն ե, հետևաբար կոլտնտեսության յուրաքանչյուր անդամ շահագրգոված ե կոլտնտեսության հաջողություններով:

Յուրաքանչյուր կոլտնտեսութիւնի պարտական ե միանգամայն յուրացնել, ու հարյուր տոկոսով մասնակցել գյուղատնտեսության վերակառուցման ամրապնդման: աշխատանքներով:

Անհրաժեշտ ե զուգնթացարար աշխատավոր կինոջ աշխատանքի համապատասխան պայմաններ ստեղծել:

III

ՄԱՆԿԱՄԱՍՈՒՐՆԵՐԸ—ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՆՊԱՍՑՈՒՄ Ե՞ ԱՐԴՔԻՆՊԱՆԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ

Կոլտնտեսությունների աճումը և զարգացումը, յերկրի արդյունաբերության ասպարիզում ունեցած հաջողությունները պահանջում են կանանց լայն խափերի ել ավելի մասնակցությունը յերկրի սոց. շինարարության, աշխատավոր գեղջկունու մասնակցությունը կոլտնտե-

սություններում: Պետք ե համապատասխան պայմաններ ստեղծել վոր աշխատավոր կինը հնարավորություն ունենալ լիովին մասնակցելու սոց. շինարարության, անցնելու հարվածայինների շարքերը, նպաստել և կոլտնտեսություն ների արդինպահանի իրադրժան:

Հին կենցաղով, հին սովորություններով, հին նիստուկացով աշխատավոր կինը զրկված կլինի ու չի կարող համապատասխան կերպով մասնակցել գյուղի փերակառուցման, նպաստել յերկրի սոց. շինարարության:

Աշխատավոր կնոջ կենցաղը բարեփոխելու, նոր հիմքերի վրա զնելու համար, պիտք ե կյանքի մեջ անցկացնել մի շարք միջոցառուժներ: Հիմնական միջոցառումներից մեկն ե կոլտնտեսություններում կազմակերպել մանկամառներ:

Մանկամառը, ուր աշխատավոր կինը հնարավորություն ունի տեղափորելու իր յերեխային, վորտեղ վերջինս ստանում և համապատասխան հոգատարություն, դաստիարակություն և խնամք, հնարավորություն և տալիս աշխատավոր կնոջ մասնակցել հասարակական բոլոր աշխատանքներին:

Մանկամառը ազատում ե կնոջ տնային շատ հողսերից, ստեղծում նրա համար կենցաղի ու աշխատանքի նոր պայմաններ:

Յեղած մանկամառների թիմն անբավարար ե: Կարիքն ակնհայտ ե ու մեծ: Պետք ե յուրաքանչյուր խորհ. ու կոլտնտեսության մեջ կազմակերպել մանկամառը:

Անցել ե այն ժամանակը, յերբ պիտք եր աշխատավոր կնոջ ապացուցել ու համոզել մանկամառների կազմակերպման անհարժեշտությունը: Կոլտնտեսություններում հիմնականում բոլորն ել հասկացել ու ըմբռնել են մանկամառների անհրաժեշտությունն ու նրանց բերած ոգությունը:

Ներկայում գլխավոր հարցը մանկամառների անմիջական կազմակերպման ու ապահովման մեջն ե: Շատ կոլտնտեսություններում հասկացել են, վոր մանկամառների կազմակերպման խնդիրը կազմում և կոլտնտեսության արդինպահանի մի մասը:

Ամեն մի միջոցառում, վորը նպաստում ե արդինպահանի իրացման, նպաստում վերջինիս, կոլտնտեսությունը պետք ե կիրառի, ստեղծքի այդ միջոցառումների կիրառման համապատասխան պայմաններ:

Միջոցառումներից մեկը, դա, ինչպես վերեվը հիշեցինք, մանկամառների կազմակերպումն ե: Պարզ ե, վոր կոլտնտեսության մեջ մանկամառը կազմակերպելու խնդրով ամենից առաջ պետք ե զրադշի ինքը, կոլտնտեսությունը, հանձինս վարչության ու կոլտնտեսության բոլոր անդամների:

Դյուպի բոլոր կազմակերպությունները շահագրգուժած են կոլ-

տնտեսությունների հաջողության, դարգացման, ամրապնդման մեջ: Նրանք միանդաման շահագրգուժած են աշխատավոր կնոջ համար ստեղծելու աշխատանքի ու կենցաղի նոր պայմանները: Ծահագրգուժած են յերեխանների առողջությամբ, պատրաստելու մեր յերկրի համար գիտակից, առողջ սոց. շինարարները Ահա թե ինչու մանկամառների կազմակերպման ակտիվ մասնակցելու յեն գյուղի բոլոր կազմակերպությունները: Բացի կոլտնտեսությունից, ամենից առաջ այս խնդրով պետք ե զրադշին գյուղին որպես լարդուրուրով, խորհրդի առողջապահական սեկցիան, կոռպերատակիվը, բժշկա-սանիտարական կազմակերպությունները և այլն: Սրանք չեն կարող աշխաթող անել մի այնպիսի խնդիր, ինչպիսին ե կոլտնտեսություններում մանկամառների կազմակերպումը:

Մոր ու մանկան առողջության պաշտպանության գործն առողջապահական բաժինների հիմնական խնդիրներից մեկն ե: Այլ միջոցառումների շարքին, առողջապահական բաժինները պլանային կարգով զրադշում են և մանկամառների կազմակերպման խնդրով:

Յուրաքանչյուր առողջապահական բաժինը իր աշխատանքի վայրում, նախորոք ծրագիրը համաձայնեցնելով վերադաս առբաժնի ու այլ կազմակերպությունների հետ, կազմում ե մանկամառների կազմակերպման պլանը: Մայունական առողջապահական բաժինը մանրամասն ծրագիր ե կազմում:

Յերկրային առողջապահական բաժնի տվյալների հիման վրա, իր ույոնի վեր խորհ. ու կոլտնտեսության մեջ կազմակերպել մանկամառներ, քանի հոգու համար, բնչտիպի, ժամանակավոր, մշտական, շարժական և այլն: Մանկամառների կազմակերպման, հետազում ել նրա բոլոր աշխատանքներն ընթանալու յեն առբաժնի անմիջական ղեկավարությամբ ու գտնվելու նրա հսկողության ներքո:

Բոլոր այլ կազմակերպություններն ու հիմնարկությունները, վորոնք մասնակցում են մանկամառների կազմակերպման գործում, պետք ե իրենց միջոցառումներն ու աշխատանքները համաձայնեցնեն առբաժնի հետ:

Փողովրդական Առողջապահության Կոմիսարիատը յուրաքանչյուր տարի մի շարք կազմակերպությունների հետ կապում է պայմանագիր, վերջիններս իրենց վրա յին վերցնում մանկամառների կազմակերպման աշխատանքներում մի շարք պարտականություններ:

1931 թ. Ժողովրդական Առաքելինը Կոլտնտեսներունի հետ կապել եր պայմանագիր, վորով վերջինս իր վրա վերցնում է մի շարք պարտականություններ, որինակ, մանկամառների համար շինել մի շարք նոր շենքեր, մի շարք հին շենքեր վերանորոգել ու հարմարեցնել մանկամառների համար, և այս բոլորը նախառող համար համաձայնեցնելով առբաժնների հետ ու ստանալով նրանց համաձայնությունը:

Հիշված պայմանագրի համաձայն կոլտնտեսությունները պարտավորվում են մանկամսուրներն ապահովել ինվենտարով:

Կոլտնտեսությունները պետք են մանկամսուրներն ապահովելով, ամենից առաջ ուստիելզեններով, նույնիսկ շեշտված և յերեխանների պետքի համար առաջին ցանքուր հատկացնել և այլն:

Միանդամայն պարզ և հարցը, թե ինչ գեր են խաղում մանկամսուրների կազմակերպման խնդրում առօրաժինները, նրանք են կազմակերպում, ոեկավարում ու հսկում մանկամսուրների կազմակերպումը:

Բայց սա չի նշանակում, վոր այլ կազմակերպություններն այս խնդրով զբաղվելու չեն և կամ հեռու յեն մնալու: Ընդհակառակն, ինչպես վերևում հիշեցինք, խորհ. ու կոլտնտություններում բոլոր կազմակերպությունները շահագրգոված են մանկամսուրներ կազմակերպելու խնդրով, պետք են ցույց տան իրենց ակտիվ մասնակցությունը: Առանց կազմակերպությունների, կոլտնտեսական աշխատավոր մասսայի ակտիվ աջակցության ու մասնակցության, առօրաժինները չեն կարող այս հարցը լրիվ վճռել: Միայն կոլտնտեսականների աջակցությամբ ու ակտիվ մասնակցությամբ կարելի յեն կազմակերպել խորհ. ու կոլտնտեսություններում մանկամսուրներ, համապատասխան հիմքերի վրա դնել ու մանկան առողջապահության պաշտպանության դործը:

IV

ԻՆՉ Ե ՄԱՆԿԱՄՍՈՒՐԸ ՅԵՎ ԻՆՉ ԵՅԻՆ ԽՈՍՈՒՄ ՆՐԱ ՄԱՍԻՆ ԱՌԱՋ ՈՒ ԱՅԺՄ

Մանկամսուրը մի հիմնարկ են, վորտեղ մինչ չորս տարեկան հասակի յերեխանները դաստիարակվում և հոգատարության տակ են գըտնվում ամբողջ որվա ընթացքում: Կան մանկամսուրներ՝ մշտական և ժամանակավոր: Մշտական մանկամսուրներն աշխատում են անընդհատ, ամբողջ տարվա ընթացքում: Ժամանակավոր մանկամսուրներն աշխատում են մի կամ մի քանի ամիս միայն: Ժամանակավոր մանկամսուրները կազմակերպվում են գլխավորապես գյուղերում, խորհ. ու կոլտնտեսություններում դաշտային աշխատանքների ժամանակի: Գյուղերում խորհ. ու կոլտնտեսություններում բացի ժամանակավոր մանկամսուրներից, կան և մի շարք մշտական մանկամսուրներ: Մշտական մանկամսուրներից, կան և մի շարք մշտական մանկամսուրներ: Մշտական մանկամսուրները մեծ թվով զարդարած են քաղաքներում, նամանավանդ արդյունաբերական կենտրոններում:

Տարեց տարի մանկամսուրների թիվը և՛ քաղաքներում և՛ գյուղերում ավելանում են:

Մինչ Հոկտեմբերյան հեղափոխությունը, Ռուսաստանում շատ քիչ մանկամսուրներ կային: Նրանք ծառայում եյին միայն ունիվոր

դասակարգի, բուրժուազիայի շահերին: Կապիտալիստը, ավագալ դեպքում գործարանատիրոջ կնոջ աշխատանքն ել ավելի շահագործելու և ավելի ողուտ ստանալու համար, չեր հակառակում մանկամսուրի կազմակերպման: Կապիտալիստի ըրջանում, մանկամսուրների կազմակերպման մեջ գնառել մի վորեկե ողուտ աշխատավոր կնոջ կամ նրա յերեխայի համար—դա անհեթեթություն կլինի:

Այլ ե այժմ մեղանում մանկամսուրների նշանակությունն ու նպատակը: Նրանք հնարավորություն են տալիս կոլտնտեսունուն գործնականում նպաստել ու մասնակցել կոլտնտ: շինարարությանը և նրա ամրապնդմանը: Քանի գնում՝ մանկամսուրների թիվը թե քաղաքում և թե գյուղում ավելանում է: Մի յերկու թիվ, վորոնք ցույց են տալիս, թե ինչ թափով են աճում սեղանում մանկամսուրները:

1930 թ. գյուղերում մշտական մանկամսուրներում տեղերի թիվը հասնում եր 35.800·ի, իսկ 1931 թ. 69.000: Ժամանակավոր մանկամսուրներում 1930 թ. տեղերի թիվը հասնում եր 750.000, իսկ 1931 թ. միլիոնից ավելի: Կասկած չկամ, վոր 1932 թվին նրանք մեծ չափով աճելու յեն:

Խորհ. ու կոլտնտեսությունների զարգացման հետ միասին զգալի չափով ավելանում և մանկամսուրների թիվը: Միայն կոլտնտեսության շնորհիվ աշխատավոր կինը առաջին անգամ հնարավորություն և ստանում լայն չափով մասնակցելու հասարակական՝ աշխատանքներին, նպատակությունը կոլինարարության, մասնակցելու սոց. շինարարության:

Վերջապես, կոլտնտեսություններում ավելի ույժ, միջոց ու հընարավորություններ կան մանկամսուրներ կազմակերպելու, քան անհատական տնտեսություններում: Յեթե այժմ աշխատավորությունը և քաղաքում հիմնականում ըմբռնել և հասկացել մանկամսուրների անհրաժշառությունն ու նպատակը, դա չեր կարող լինել հեղափոխությունից անմիջապես հետո, յերբ դեռ ուժեղ եր միրներցին թշգամինների ընդիմագրությունը ու նրանց ազիտացիան: Շատերը, նամանավանդ զյուղում, վոչ միայն խեթ աչքով եյին նայում մանկամսուրների վրա, այլ վոմանք նրանց մասին լսել անգամ չեյին ուզում: Նույնիսկ գեղջկունու բերանից, թեև հազվագյուտ, բայց լավում եյին նման նախագասություններ—«ավելորդ յերեխում ունել ինչ, վոր տանեմ մանկամսուր տա» և այլն: Առանձին զարմանալու րան չկար. այսորվա ազատ կինը չե վոր հարյուրավոր տարիների ընթացքում միշտ տգիտության և խավարի մեջ և յեղել միշտ ընկճըգած ու ճնշված: Այդ որին հասցըել եր նրան հին կենցազը, նիստ ու կացը, հին սովորությունները, և զիմափորը, այդ որին նրան հասցըել եր կապիտալիստը: Կինը ընդունակ չեր միանգամից ըմբռնելու մանկամսուրների նշանակությունն ու անհրաժշտությունը: Թեև վոչ

յերկար, բայց պետք եր վորոշ ժամանակ՝ ջախջախելու ներքին թըշ նամիների—կուլակի, տերտերի ու նրանց արբանյակների ազիտացիան՝ հակառակ ու ընդգեմ մանկամուռների կաղմակերպման։ Ինչ անհիմ ու պրովակացիոն լուրեր առն, վոր չեյին տարածում մանկամուռների շուրջը՝ կուլակներն ու նրա արբանյակները։ Հիմնականում այս բոլոր դժվարություններին աշխատավորությունը հաղթել ե ու ըմբռնել ինչպիսի խական նշանակությունը։ Այլ ե այժմ աշխատավոր կնոջ վերաբերմունքը դեպի մանկամուռները։ Ցեթե մինչև այժմ կան տեղեր, վորտեղ պատճեռմ և աշխատավոր գեղջկունու կողմից դեպի մանկամուռը բացառական վերաբերմունք, զրանք միայն յեզակի դեպքեր են։ Պետք ե համապատասխան աշխատանք թափել ու վերջնականապես համոզել աշխատավորության մանկամուռների նշանակությունն ու նպատակը։

Պետք ե թշնամիների կողմից քողարկյալ աղիտացիային վերջ տալ, ջախջախել նրա խարդախությունները, միանգամայն մատչելի դարձնել գյուղական աշխատավորության մանկամուռների քաղաքական ու անտեսական նշանակությունը։

Ապացույց, վոր ներկայում հիմնականում աշխատավորությունը հասկացել և մանկամուռների նշանակությունն ու անհրաժեշտությունը, առաջիւ բացառական բովանդակություն ունեցող խոսակցությունների փոխարեն, գեղջկունու բերանից դրուք կլսեք նման խոսակցություններ՝ «գյուղերում, մեր կոլտնտեսություններում, մեզ ել պետք ե ունենալ այնպիսի մանկամուռներ, ինչպիսին քաղաքներուն ունեն բանվորուհիները» և այլն։

Թեև մանկամուռների թիվը տարի ավելանում ե, բայց կարիքը դեռ մեծ ե։ Շատ տեղերում, շատ կոլտնտեսություններում, մանկամուռները բացառակայում են։ Ամբողջ աշխատավորության առաջ, մասնավորապես առբաժնի, կոլտնտեսությունների ու կոլտնտեսականների առաջ գործնական կերպով ինչպիսի ե դրված կաղմակերպել կոլտնտեսություններում համապատասխան քանակով ու վորակով մանկամուռներ, ազատել աշխատավոր կնոջ տնային ու ընտանեկան շատ հոգսերից, հնարավորություն տալ նրանց իրականում մասնակցել գյուղի վերակառուցման։

V

ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԺԱՄԱԿԱՎՈՐ ՄԱՆԿԱՍՈՒՐՆԵՐ

Եթե կոլտնտեսության մեջ չկա մանկամուռ ու չի կարելի մանգամից կաղմակերպել մշտական մանկամուռ, ապա պետք ե ձեռնարկել ու կաղմակերպել ժամանակավոր մանկամուռ։

Դաշտային աշխատանքների սկզբին, գեռ նրանք չսկսում պետք ե ունենալ պատրաստի մանկամուռի բացման նախա-պատրաստական աշխատանքները պետք ե սկսել գեռ շատ կանուխ, ձմեռվանից։ Միանգամայն բացասական յերեկույթ ե, յերբ մանկամուռների կաղմակերպման նախապատրաստական և կաղմակերպչական աշխատանքներին անցնում են դաշտային աշխատանքները սկզբուց հետո։

Պետք ե նախորոք պատրաստել մանկամուռի կաղմակերպման ու բացման կոնկրետ ծրագիրը։ Ծրագրի ժամանակամուռի մասնակցություն պետք ե ցույց տան տեղի բժշկա-սանիտարաբական աշխատողները։ Մինչ ծրագիր կաղմելը պետք ե մանրամասն ծանոթանալ տըվյալ կոլտնտեսության աշխատանքների ծավալին ու տեսակին, կոլտնտեսության արդիինպլանին։ Մանկամուռը կաղմակերպումը սերտ կազմաձ պետք ե լինի կոլտնտեսության արդիինպլանի հետ, մանկամուռի ամբողջ աշխատանքը պետք ե կաղմի կոլտնտեսության աշխատանքների մի ողակը, նրա ծրագրի մի մասը։

Պետք ե նախորոք հաշվի առնել քանի աշխատավոր կանացի ձեռքեր կան տվյալ կոլտնտեսության մեջ, քանի հոգի մանկամուռի հասակ ունեցող յերեխաներ, նրանցից քանիսին պետք ե տեղափողել մանկամուռում և այլն։ Առանց այդ տվյալներին զժվար ե կաղմել մանկամուռի կաղմակերպման ու բացման ծրագիրը։ Հետեւյալ խընդիրը, վորի վրա պետք ե անմիջապես ուշադրություն դարձնել, դա մանկամուռի աշխատանքների տեվողության հարցն ե։ Քանի վոր խոսքը ժամանակավոր մանկամուռի մասին ե, ապա պետք ե վորոշել, ինչքան ժամանակ ե նա աշխատելու—ամիս, յերկու, յերեք, ավելի թե պակաս։

Մինչ այժմ գյուղերում ժամանակավոր մանկամուռներն աշխատում ենին միշտ յերկու, ամենաշատը՝ յերկու ամիս ու կես։ Ներկա պայմաններում, յերբ կոլտնտեսությունները քանի գնում զարգանում են, աշխատավոր ձեռքերի պահանջն ավելանում ե, հիշված ժամանակամիջոցը, այսինքն մանկամուռների աշխատանքների տեվողությունը յերկու կամ յերկու ամիս ու կես՝ միանգամայն անբավարար ե։ Պետք ե ստեղծել այնպիսի պայմաններ, վորպեսզի կոլտնտեսություններում մանկամուռներն ավելի յերկար ժամանակ գոյություն ունենան։ Պետք ե ձգտել, վոր տվյալ կոլտնտեսության մեջ մանկամուռը բացվի դաշտային աշխատանքների սկզբին, աշխատի ամբողջ ժամանակը, փակի վոչ կանուխ, քան գաշտային աշխատանքների վերջը։

Կոլտնտեսության մեջ ժամանակավոր մանկամուռի հիմնական նպատակն ե լիովին հնարավորություն տալ կոլտնտեսության անդամ աշխատավոր կնոջ ակտիվ մանակցելու տնտեսության բոլոր աշ-

խատանքներին: Մանկամսուրը պետք ե աշխատի վաղ առավոտից մինչեվ յերեկո: Կոլտնտեսության մեջ գտնվող մանկամսուրի հասակ ունեցող բոլոր յերեխաներին պետք ե ապահովել մանկամսուրներով: Յերբ յերեխան ամբողջ որը լինում է մանկամսուրում, մայրը կարող է հանդիսատ աշխատել: Աշխատանքից հետո մայրը մանկամսուրից վերցնում է իր յերեխային այն պայմանով, վոր մյուս առավոտ աշխատանքի գնալուց առաջ յերեխային նորից բերի մանկամսուրը:

Բացի կոլտնտեսության անդամների յերեխաներից, մանկամսուրներում պետք ե ընդգրկել և աշխատավոր անհատական անտեսություն ունեցողների յերեխաներին: Վերջիններս առիթ կունենան տեսնելու և համոզվելու մանկամսուրի տված ողուտները, գործնականում կամողին կոլտնտեսության անհամեմատ մեծ առավելությունների մեջ, մոտիկից կծանօթանան կոլտնտեսության աշխատանքներին:

Յեթե 2—4 տարեկան հասակի յերեխաները կարող են մանկամսուրում մնալ առավոտից մինչև յերեկո առանց մայրերի, դա հնարավոր չե ծծկեր յերեխաների վերաբերյալ: Մանկամսուրի հարցը ծծկեր յերեխաների համար պետք ե վճռել առանձին, ինկատի առնելով մի շարք յուրահատուկ պայմաններ: Անհրաժեշտ և ծծկեր յերեխայի համար մանկամսուրում առանձին բաժին կազմակերպել, կամ առանձին կազմակերպել մանկամսուր, վորովհետեւ հակառակ դեպքում, կոլտնտեսությունը զրկված կլինի մի շարք աշխատավոր կանանցի ձեռքերից, վորոնք տվյալ ժամանակամիջոցում ունեն ծծկեր յերեխաներ:

Ծծկեր յերեխաների համար, տեղի պահանջի համաձայն, յեթե աշխատելու տեղը հետոյ յե, պետք ե կաղմակերպել շարժական մանկամսուրներ: Մանկամսուրները պետք ե կաղմակերպել հենց դաշտում, աշխատանքի վայրում, վոր ծծկեր յերեխան սորից շատ հեռու չլինի, վոր մայրը պահանջված պահին հնարավորություն ունենա իր յերեխային կերպելու կրծքով:

Ծծկեր յերեխայի համար իհարկե ամենալավ սնունդը մոր կաթն ե: Այս հանդամանքի մոտից թեթեվ ու հարեվանցի կերպով չի կարելի անցնել: Բժշկականության մեջ ապացուցված փաստ ե, վոր մոր կաթով սնված յերեխաները մահացու ու հիվանդության դեպքեր անհամեմատ քիչ են տալիս (իհարկե յեթե մայրը հիվանդ չե), քան այն յերեխաները, վորոնք սնվում են ծծկեր հասակում արհեստական կերպով: Սակայն զիտությունն այժմ փորձեր ունի կատարած՝ ծծկեր յերեխաների արհեստական սննդի բաղադրության քանակն ու վորակը մոտեցնել մոր կաթի վորակին: Այս խողը կատարելիությունը միանդամայն կապահովի մանկամսուրները ծծկեր յերեխաների դրությունը սննդի տեսակետից՝ անկախ մոր կաթի սննդից:

Գիտական հետազոտությունները ցույց են տալիս, վոր մոր կաթի հիմնական բաղադրիչ մասերը՝ յուղ, սպիտակուց, շաքարեղեն, ավելի հետությամբ են յուրացվում, քան մի վորեկի կենդանու, կովի, այծի, վոչխարի և այլ կաթը:

Ծծկեր յերեխայի նորը կազմվածքն իր դարձացման ու աճման համար պահանջում է մի շարք այլ սննդարար նյութեր վորոշ քանակի ու վորակի: Հիշված նյութերը, վորպես կանոն, պարունակվում են մոր կաթում: Մոր կաթի հիմնական առավելություններից մեկն ել այն ե, վոր յերեխան նրան ստանում ե անմիջապես մոր կրծքից, մաքուր ու համեղ ջերմությամբ: Կովի կաթով կերպելիս, մենք ստիպված ենք վերջինս յեփել, վորպեսզի նրա մեջ գտնվող վնասակար միկրոբները վոչչանան: Կաթի մեջ մի շարք նյութերի շարքեն գտնվում են, այսպես կոչված, վիտամիններ (նյութեր), առանց վորոնց որդանիզմը չի կարող նորմալ աճել ու դարձանալ Յեփելիս՝ այդ կարելի նյութերը քայլայվում են, վոչչանում, ու որդանիզմը այսպիսով զրկվում ե ամենանհրաժեշտ նյութերից: Մոր կաթով սնվող յերեխան կաթի հետ միասին ստանում ե և բավարար քանակով ու վորակով վիտամիններ:

Ահա թե ինչու յուրաքանչյուր առողջ մորից պետք ե պահանջել, վոր նա յերեխային անգայման կերպարի իր կաթով: Ահա թե ինչու պետք ե պահանջել, վոր կոլտնտեսություններում ծծկեր յերեխաների համար կաղմակերպվեն առանձին մանկամսուրներ այնպես, վոր մայրը հնարավորություն ունենա իր յերեխային իր ժամանակին կերպարել կրծքով:

Յուրաքանչյուր մայր պետք ե լավ իմանա, թե ինչպես պետք ե յերեխային կերպարել կրծքով: Այս մայրը, վոր չգիտե թե ինչպես պետք ե յերեխային կրծքով կերպարել, նա կարող ե չիմանալով ու չզգալով այդ, շատ մեծ վնասներ հասցնել յերեխային, հակառակ իր ցանկության: Զի կարելի յերեխային յուրաքանչյուր անգամ լաց լինելիս կուծք տալ: Պետք ե յերեխային ժամանակով կերպարել: Կաթը, վոր յերեխան ստանում ե մորից, նրա ստամոքսի մեջ մնում ե մոտավորապես 2—3 ժամ, վորից հետո կաթը ստամոքսից անցնում ե աղիքների մեջ: Այստեղից պարզ ե, վոր յերեխային կրծքով կարելի յե կերպարել վոչ հաճախ, քան յերեք ժամը մի անգամ, հակառակ դեպքում յերեխայի լիքը ստամոքսն ստիպված ե ընդունել այլ և վորոշ քանակությամբ կաթ: հետեւակնքը՝ ստամոքսի ցավ, մարսողության խանդարում և այլն:

Յերեկվա ընթացքում յերեխան կուրծք պետք ե ստանա 6—7 անգամ, այսինքն, 3—3 ½ ժամը մի անգամ: Դիշերվա ժամը 12-ից մինչև առավոտյա ժամը 6-ը պետք ե հանդիսատ տալ և յերեխային և

մորը: Սնունդ ընդունելու տեղաղությունը պետք է տեղի գոչ և վելի, քան 15—20 րոպե: Այս ժամանակամիջոցը սիանգամայն բավարար է, զոր նա ստանա մորից իրեն պետք քանակով կաթը:

Քանի զոր ծձկեր հասակի յերեխան անպատճառ պետք է սնվի մոր կաթով, ապա պարզ է, զոր այդ հասակի յերեխաների համար խորհ. ու կոլտնտեսություններում պետք է կաղմակերպել համապատասխան շարժական մանկամուրներ: Ամառային աշխատանքի տագնապի, հնձի ու հափաքի ժամանակ ցանկալի յերդեն ունենալ պատրաստի մանկամուր ծձկեր յերեխաների համար:

Շարժական մանկամուրը պետք է լինի գոչ հեռու համապատասխան հասակի յերեխա ունեցող մայրերի աշխատավայրից: Ժամանակին պետք է կոլտնտեսության վարչության հետ պայմանավորվել, վորպեսզի ծձկեր յերեխաներ ունեցող մայրերը հիմնականում աշխատանք ստանան մի վայրում, հակառակ դեպքում անհնարին է դառնում նրանց յերեխաների համար շարժական մանկամուր կաղմելը:

Նման շարժական մանկամուրների կաղմակերպումը մեղանուս նորություն չե: Ամսովա ընթացքում Միության մի շարք ռայոններում այս տեսակի մանկամուրներ դոյություն ունեցել են ու հաջող աշխատել:

Պետք է ողտադործել բոլոր հնարավորությունները, կաղմակերպել ծձկեր յերեխաների համար շարժական մանկամուրներ ու զնել նրանց աշխատանքը լավ հիմքերի վրա:

Մանկամուրը պետք է կաղմակերպել 10—15 յերեխայի համար, ամենաշատը 20 հոգու, զոչ ավելի: Սննդի հարցը համարյա ինքնին և վճռվում, վորովհետեւ հիմնականում յերեխաները կերակրվելու յեն իրենց մոր կաթով: Միայն 5—6 ամսականից մեծերի համար պետք է բացի մոր կաթից, ևս լրացուցիչ ոնունդի Յերկրորդ պայմանը, վորի վրա պետք է լուրջ ուշադրություն դարձնել—դա մայրերի ժամանակին յերեխաներին կերակրելու հարցն եւ Յերեխան նշանակված ժամանակին պետք է ստանա լրիվ պետք սնունդը:

Յերեխաների ազրած տեղը, կան կարասիքը պահել միշտ մաքուր, սա մանկամուրի ամենազլխավոր պայմաններից մեկն է: Յեթե բացակայում են յերեխաների համար փոքրիկ մահճակալներ, տպաձեռք բիւրել նրանց փոխարինող դամբյուդների Ունենալ համապատասխան քանակով պիտօնակեղեն: Բացի այդ, պետք է ունենալ մի սեղան, քիչ կանկարասիք, մի քանի աման յերեխաների համար լրացուցիչ սնունդ պատրաստելու: Յանկալի յե, վոր ծառայողներից գոնե մեկը տեղյակ լինի քժշկական տարրական գիտելիքներին, վոր նա կարողանա հետեւի մանկամուրի ու յերեխաների առողջապահական պայմաններին:

Բժշկա-սանիտարական ասպարեզում աշխատողները շատ մեծ անելիքներ ունեն մանկամուրների կաղմակերպման և պահվելու դորձում: Այստեղ հիշված են ծձկեր յերեխաների համար շարժական մանկամասուրներ կաղմակերպելու, նրանց կաղմակերպության և աշխատանքի միայն ընդհանուր կողմերը: Տեղական շահագրգոված կաղմակերպության ամսատեսությունները, ամենից առաջ քժշկա-սանիտարական մասուրները, յենելով տեղի կոնկրետ պայմաններից, պետք է նըրաբացնեն բոլոր տվյալները, աշխատեն ու կաղմակերպեն նման մանկամուրներ ու նրանց աշխատանքը գնեն լավ հիմքերի վրա:

Դա յե պահանջում կոլտնտեսության շահը:

VI

ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԱՆԿԱՍՈՒՐՆԵՐ

ИИ СТИГУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

61083.64
Մանկամուրի կաղմակերպման խնդրով ամենից առաջ զբաղվելու յե ինքը, կոլտնտեսությունը առըամնի գեկավարությամբ. զա կոլտնտեսության առողջապահական քջիջի հիմնական խնդիրներից մեկն եւ: Պետք է մոռանալ վոր մանկամուրի կաղմակերպումը պետք և կաղմի կոլտնտեսության ծրագրի մի մասը: Ամենից առաջ մանկամուր կաղմակերպելու խնդիրը պետք է զնել կոլտնտեսուականների ընդհանուր ժողովին: Հարցը պետք է նախորդը լավ ու բազմակողմանի մշակել կոլտնտեսուականներին մանրատեսն ծանոթացնել մանկամուրների նշանակության, անհրաժեշտության տեսակների հետո Պարզել ավելի քան կոնկրետ բոլոր այն մանրամասնությունները, վորոնք անսիջապես կապված են մանկամուրների կաղմակերպման հետ:

Ընդհանուր ժողովի վորոշումից հետո, անցնել գործնական աշխատանքի: Ամենից առաջ կատարել մանկամուրների հասակ ունեցող յերեխաների հաշվառքը: Հաշվառքը լրիվ լինելու համար հաճախել ծնողների աները, ողտագործելով այս հանգամանքը, բացի հաշվառքից, նաև բացատրողական նպատակի: Խնդիրը կաղմակերպել տեղում այնպես, վոր յուրաքանչյուր ծնող շատ պարզ պատկերացնի մանկամուրների նշանակությունը ու շատ հեշտությամբ ընդառաջ գնա գործին: Միենույն ժամանակ կարողանա հեշտ, գիտակից ու լիովին հականարկած հասցնել տերտերի ու կուլակի կողմից հակառակ մանկամուրների ուղղված ագիտացիային:

Մանկամուրների հասակ ունեցող յերեխաների քանակը վորոշելուց հետո, մանկամուրի կաղմակերպման ծրագիրը կաղմելուց առաջ, պետք է մանրամասն ծանոթաման ավագալ կոլտնտեսության արդինալանին:

Բացի հաշվառքից, բաշտարական աշխատանքից, կողմնունության արդիինպահնի հետ կազմելու աշխատանքից, մանկամսուրը կազմակերպելու համար պետք եւ ապահովել հետեւյալ հիմնական պայմանները—նյութական միջոցների հայթնայթում, կադրերի խնդիրը համապատասխան շենքի հարցը և այլն:

Մանկամսուրի կազմակերպման ու աշխատանքի համար պետք յեղած միջոցները հայթնայթվելու յեն միշտ շարք հիմնարկություններից ու կազմակերպություններից: Ամենից առաջ ձախուրի գդալի մասը պետք եւ հոգա ինքը՝ կոլտնտեսությունը, ապա մասնակցեն միշտ շարք այլ կազմակերպություններ—դյուղասրհուրդը, տեղի սպառողական ընկերությունը, առողջապահական բաժինը, կարմիր խաչի ընկերությունը և այլն: Բարի նյութական ոգնություննից, առողջապահական բաժինը պետք եւ մանկամսուրն ապահովի հոգա ու զործին տեղյակ համապատասխան աշխատանքով, ամենից առաջ վարչով:

Մանկամսուրի նյութական միջոցները պետք եւ ժամանակին հոգաւ վորպեսի նրա նորմալ աշխատանքները չխախտվի:

Հետեւյալ խնդիրը, փորի վրա պետք եւ զարձնել վոչ պակաս ուշադրություն, դա մանկամսուրը ծառայողներով ապահովելու խընդիրն եւ: Ամենից առաջ մանկամսուրի ղեկավարությունը պետք եւ հանձնել ակտիվ ու զործին տեղյակ անձնապորության: Միանգամայն ցանկալի յեւ, փոր այդ անձը լինի ակտիվ կոլտնտեսունի, ավարտած համապատասխան կուրսեր:

25—30 յերեխա ունեցող մանկամսուրը պետք եւ ունենա 6 ծառայող մանկամսուրի վարիչ յերկու քույր, մեկ խոհարարունի, յերկու տեխնիկական ծառայող՝ մեկը շոքերը լվացրող, իսկ սյուսը հետեւ վոր հիմնարկի ու յերեխաների ընդհանուր մաքրության:

Մանկամսուրի աշխատանքները կազմակերպողն ու ղեկավարողը պետք եւ լինի հիմնական մանկամսուրի վարիչը: Վարիչը համապատասխան մարմինների ու կազմակերպությունների ոգնությամբ սահնում եւ բոլոր նախապատրաստական աշխատանքները:

Մասնակցում եւ միջոցների հայթնայթման, բժշկի հետ միասին զըստնում եւ համապատասխան շենք, վերջինս վերանորոգության յենթարկում, ձեռք բերում մանկամսի համար համապատասխան կահկարասիք:

Սորտմանի ղեկավարությամբ զտնում եւ ծառայողներ, փորոնք համապատասխանին իրենց կոչման:

Համապատասխան հանձնաժողովի հետ միասին ծնողներից ընդունում եւ խնդիրներ, նայում վիրջիններս և ընդունում յերեխաներին: Այսիդու պետք եւ ճիշտ և լրիվ կերպուն զասակարգային զիջը, վոչ միշտապում թույլ շտաբ, փոր անհարազատ տարրը յերեխային տեղափորի, յերբ աշխատավոր կոտջ յերեխան կարող եւ չնդունված մնալ:

Մանկամսուրի ամբողջ տնտեսական մասի հոգան ընկնում և մանկամսուրի վարչունու վրա: Նա հոգա եւ տանում, վոր մանկամսուրը ժամանակին ստանա պետք յեղած քանակի ու վորակի ուստիեղին, ինքնատար, վառելիք, մթերքներ ու նյութեր: Ժամանակին մաքրել ու միշտ մաքրուր պահել ամբողջ շենքը ու մանկամսուրի բոլոր ինչքը: Հոգա եւ տանում, վոր յերեխաներն ապահոված լինեն համապատասխան քանակի ստիտակեղենով: Հետեւի վերջինիս մաքրության, կարկատրելուն և այլն: Մանկամսուրի վարչունին առանձին հոգա եւ տանելու ժամանակին ու լրիվ ստանալու ուտելեղենները, հետեւելու յեն նրանց պատրատման, բաժանման հաշվառքին և այլն: Վարչունին հետեւում եւ ինքնատարին, վոր չանցեանա, չփանա: Մի վորեւ դեպք պատահելիս, կազմում եւ փոքրիկ հանձնաժողով, վերջինս արձանագրում եւ պատահած զեպքը, փըչացած կամ կորած ինքնատարը ցուցակից հանում և կամ հանցավորին գտնում ու արժեքը նրանից վերցնում:

Բժշկի և մանկամսուրի քույրերի հետ միասին կազմում եւ մանկամսուրի աշխատանքների ներքին կանոնադրություննը, աշխատանքի որացույցային պլանը և այլն ու հետեւում վերջինիս ժամանակին ու թիվ կիրառման:

Վարչունին ստանում եւ մանկամսուրին հասանելիք փողերը, ծախսում համաձայն հաստատված նորմանաշիքի, տանում յել ու մտից հաշիվը:

Հոգա եւ տանում ծնողների համար զրույցներ կազմակերպել: Կապ հաստատել ծնողների ու կոլտնտեսության կազմակերպություններինեւու:

Կազմակերպում եւ մանկական առավոտներ, մանկական տոներ, զվարճություններ և այլն:

Վերջապես, մանկամսուրի աշխատանքները վերջանալուց հետո, պատրատում եւ ու տալիս շահագրգոված մարմիններին համապատասխան հաշվետվություն և այլն:

Մանկամսուրի քույրերը հանդիսանում են վարչունու անմիջական օգնականները: Նրանք առավոտյան ընդունում են բոլոր յերեխաներին, յերեխոյան նրանց հանձնում իրենց ծնողներին: Ամբողջ որը հետեւում ու հոգա են տանում յերեխաներին, կերակրում, հազցնում, քնացնում, լվանում և այլն:

Ամբողջ որն անց են կացնում յերեխաների հետ, * նրանց հետ պարապում, նրանց հետ զբանում և այլն:

Խստիվ հետեւում են շենքի, իրերի, կահկարասիքի մաքրության: Հետեւում են յերեխաների առողջության, կատարում բժշկի համապատասխան ցուցունքները:

Վարչունին, ծնողների ակտիվի մասնակցությամբ կազմակերպում եւ մանկական ցերեկությներ, վրույցներ:

Յերեխաների կրթության, դաստիարակության ու հոգատարության մասին ծնողների համար կազմակերպում են համապատասխան զրուցյաները Հաճախում են յերեխաների ծնողների բնակարանն ու տալիս նրանց այս կամ այն ցուցմունքները:

Մնացած աշխատողների անելիքները պարզ են:

Մանկամասուրի ծառայողներից յուրաքանչյուրը պետք է իր պարտականությունները լավ իմանա: Բավական չե յերեխաներին միայն սիրել, պետք է սրա հետ միասին իմանալ վարվել նրանց հետ, իմանալ հոգս տանել նրանց, իմանալ նրանց կրթել և այն:

Շատ անգամ յերեխաների մայրերն իրենց տղիտությամբ, միան դամայն հակառակ իրենց ցանկության, իրենց յերեխաներին վնասում են: Հասարակ որինալ, յերեխան կորել և մատը, մայրը վերցնում է ու վերքը փաթաթում կեղտոտ կտորով. հետեանքը կարող է ստացվել մի շաբք բարդություններ: Մանկամասուրի ծառայողները պետք է իմանան տվյալն նմանու այլ դեպքերում ինչ անել և ինչպես ողնել յերեխային:

Վարչուհին ու մանկամասուրի քույրերը խստիվ պետք է հետեւն, վոր մանկամասուրը վոչ մի հիվանդություն մուտք չդորձի: Ամեն առաջոտ յերեխաներին ընդունելիս, անպատճառ պետք է նրանց տաքությունը չափել, յեթե մի վորեն յերեխա կասկածելի յի հիվանդության տեսակետից, նրան իսկույն և յեթ պետք է առանձնացնել իմաց տալ բժշկին ու կատարել վերջինիս ցուցմունքները: Յեթե մի վորեն յերեխա հիվանդ է, իմանալ հիվանդությունը, առողջանալուց հետ առանց բժշկի թղթի (թույլավությանը) չնդունել: Յուրաքանչյուր ծնող, յեթե չնտանիք անդամներից մեկն ու մեկը հիվանդանում է, պետք է դիմի բժշկի, իմանա հիվանդությունը, ստանա բժշկի թույլտվությունը, առա միայն այն ժամանակ յերեխան տանի մանկամասուրը:

Բացի համապատասխան նյութական միջացներից, ծառայողներից, մանկամասուրի համար պետք է գտնել համապատասխան շենք: Ամեն մի շենքում չի կարելի մանկամասուր կազմակերպել: Շենքը պետք է ունենա համապատասխան հարժարություն, լինի արձակ ու մաքուր: Առնվազն պետք է ունենալ հինգ սենյակ: Սենյակներից մեկը հատկացնելի մինչ մի տարեկան յերեխաների համար, յերկրորդ սենյակը՝ ավելի հասակավորների համար: Յերրորդ սենյակը հատկացնելի հիվանդության մեջ կասկածելի յերեխաներին առանձնացնելու համար: Չորրորդը՝ խոհանոց, հինգերորդը՝ վարչուհուն, վոր նա միշտ մանկամարում լինի: Բացի այդ, ցանկալի յե ունենալ առանձին սեղանատան համարը ու մի տառանձին սենյակ և ի սաղերի ու պարապմունքների համար:

Եեթե կողմանտեսության մեջ հնարավորություն կա մանկամասուրի շենք կառուցելու, այն ժամանակ պետք է ի նկատի ունենալ հետևյալ

հարմարությունները: մի սենյակ-ընդունարան, վարտեղ առավոտյան յերեխաներին ընդունում են, չափում տաքությունները, հիվանդության մեջ կասկածելիներին առանձնացնում, այստեղ յերեխաներին հաղցնում են մանկամարի շորերը: Յերրորդ սենյակը մի տարեկան յերեխաների համար: Յերրորդ և չորրորդ սենյակները հատկացնել մեկ տարեկանից մինչ յերեք—չորս արեկան յերեխաների համար:

Ընդունարանին կից ունենալ վեցերորդ փոքրիկ սենյակ, ուր ունենալ մի յերկու մահճակալ՝ հիվանդությամբ կասկածելի յերեխաներին առանձնացնելու համար: Վերջապես ցանկալի յե ունենալ առանձին սենյակների խաղարան, սեղանատուն ու խոհանոց: Լավ է ունենալ ապակյա պատերով սրահ, վորտեղ յերեխաներին պահել անձրես կամ վատ յեղանակներին: Սենյակներում անպատճառ ունենալ ողացքներ: Ննջարանն ու խաղալու համար հատկացրած սենյակները պետք է դարձած լինեն զեպի հարավ-արեկելք, վոր արեկի հառագայթները միշտ լինեն: Յերեխաների սպիտակեղենները լվաց չորացնել մանկամասուրի շենքում վոչ մի դեպքում չի կարելի թույլ տար Այդ աշխատանքները պետք է կտարել մանկամասուրի շենքից գուրու:

Ուսանձին հօգսի առարկա պետք է դարձնել և մանկամասուրի կանկարասիքի խնդիրը: Սեղանները, աթոռները պետք է համապատասխան յերեխաների հասակին, լինեն շատ թեթև, վորպեսզի հարկ յեղած դեպքում մեծ յերեխաները նրանց մի տեղից մյուս տեղը տեղափոխեն: Լվացտրանները պետք է նմանապես համապատասխան յերեխաների հասակին, վորպեսզի յերեխաներն ինքնուրույն կերպով կարողանան ողտվել: Ունենալ յերեխաների թվով մահճականներ կամ վերջիններիս վոխարինող զամբյուղները: Յուրաքանչյուր յերեխայի համար ունենալ առանձին բաժակ, գլաւ, ափան և այլն: Կարելի յե այս ամենը հավաքել ծնրղներից: Միջոցներ ծեռք առնել յերեխաներին ապահովելու համապատասխան քանակի սպիտակեղեններով ու շորով: Ամառը յերեխաներին հաղցնել թեթև շորեր: Մշտական մանկամասուրներում ձմեռվա համար ունենալ տաք շորեր ու վոտնամաններ:

Մանկամասուրի ամբողջ ինվենտարն ու կանկարասիքը, սկսած մահճակալից և վերջացրած խոհանոցի ամենավերջին ամանը, պետք է ժամանակին պատրաստել:

Լուրջ խնդիրներից մեկն է սննդի խնդիրը: Խախորոք յերեխաների քանակի ու հաստիկի համեմատ պետք է վորոշել սննդի քանակը, տեսակն ու վորակը: Մթերքները հիմնականում բաց ե թողներու ինքը, կոլտնտեսությունը, պակասը պահու է լրացնի սպառղական ընկերությունը:

Այս բոլոր ինդիբները պետք են նախորոք մշակել, կազմել չըս
գիր ու համաձայնեցնել շահագրդոված մարմինների ու կազմակերպու-
թյունների հետ:

Պետք են կանոնավորել և մանկամասուրի ամենորյա անհրաժեշտ
նյութերը—ջուր, վառելիք և այլն: Ուրիշ խոսքով, մանկամասուրի աշխա-
տանքների կանոնավոր ու նորմալ ընթացքի համար պետք են նախորոք
նախատեսել բոլոր մանրամասնությունները ու այս բոլորը ժամանա-
կին ու լրիվ հոգալ:

ՄԱՆԿԱՎՈՐՈՒՄԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄԸ ՅՈ ՅԵԲԵԽԱՅՅԻ ՀԱՄԱՐ

ՄԻՆՉ ՄԵԿ ՏԱՐԵԿԱՆ ՅԵԲԵԽԱՅՆԵՐԻ (10 հոգու) ՆՆՉԱՐԱՆ

- | | |
|--|----|
| 1. Մահակալներ կամ նրանց փոխարինող զամբյուղներ | 10 |
| 2. Սեղան, վորի վրա յերեխային շոր են հագցնում | 1 |
| 3. Պահարան՝ սպիտակեղենի ու այլ իրերի | 1 |
| 4. Լվացարան | 1 |
| 5. Դույլ յերեխաների կեղտուա շորերի համար | 1 |
| 6. Խեցիներ (գորակ) յերեխաների համար | . |
| 7. Յերեխաներին կեղտուակիս լվալու ու մաքրելու համար ջրի
բաժակներ ու ամաններ (տազիկ): | . |

8. Յերեխաներին լողացնելու համար լոգնոց, կամ վերջինս փո-
խարինող աման, մի դույլ մաքուր ջրի համար, մի դույլ կեղտու
շուր թափելու համար և այլն:

9. Մառայողների համար աթոռներ կամ նրանց փոխարինող
նօտարաններ:

ՀԱՄԱԿԱՎՈՐ ՅԵԲԵԽԱՅՆԵՐԻ ՆՆՉԱՐԱՆ (20 հոգու)

- | | |
|--|---|
| 1. Մահճակալներ | 2 |
| 2. Յերեխաների համար լվացարան | 1 |
| 3. Պահարան սպիտակեղենների համար | 1 |
| 4. Յերեխաներին լողացնելու համար լոգնոց, դույլ մի հատ մա-
քուր ջրի, յերկրորդ՝ կեղտուա ջրի, բաժակ, ցնցուղ և այլն: | . |

ՍԵՂԱՆԱՏՈՒՆ

- | | |
|---|---|
| 1. Սեղաններ փայտե (ցած) յուրաքանչյուր 4 յերեխային 5 հատ | . |
| 2. Աթոռներ փայտից (փոքրիկ) յերեխաների քանակով 20 հատ | . |
| 3. Մեծ սեղան | 1 |
| 4. Պահարան ամանեղենների համար | 1 |
| 5. Ափսեներ մեծ ու փոքր, յերեխաների թվով | . |
| 6. Բաժակներ, կերակրի ու թեյի գդալներ, յերեխաների թվով | . |
| 7. Դանակներ (մեծ) սեղանատան պետքերի | 2 |

- | | |
|--|---|
| 8. Պատառաքաղներ | 6 |
| 9. Թեյաման մեծ | 1 |
| 10. Թեյաման փոքր | 2 |
| 11. Աղամաններ | 2 |
| 12. Կերակրի համար ամաններ մեծ | 2 |
| 13. Աթոռներ աշխատաղների համար ու մի շարք այլ իրեր,
որինակ, ցանկովի յև ունենալ ինքնային, ժամացույց և այլն: | . |

Խ Ո Հ Ա Ն Ո 8

- | | |
|--|---|
| 1. Սեղան | 1 |
| 2. Պահարան փակ կամ քաց ամանների համար | 1 |
| 3. Կերակուր յեփելու ամաններ մեծ | 3 |
| 4. » » » փոքր | 2 |
| 5. Մեքենա միս մանրացներու | 1 |
| 6. Դանակներ խոհանոցի | 2 |
| 7. Գղալներ խոհանոցի | 2 |
| 8. Մաղ | 1 |
| 9. Դույլ մաքուր ջրի համար | 2 |
| 10. Դույլ կեղտու ջրի համար | 2 |
| 11. Բաժակ ջրի համար | 1 |
| 12. Աման (տաշ) մթերքներ լվալու | 2 |
| 13. Տախտակ խորի համար | 1 |
| 14. Աման խորոց դնելու | 1 |
| 15. Տապակիչ (թալա) մեծ | 3 |
| 16. Մի շարք այլ իրեր՝ կերակուր, նախաճաշ, թեյ պատ-
րաստելու համար: | . |

17. Մի շարք պետք իրեր վառարանի համար:

18. Պարկեր 5—6 զանազան պետքերի:

19. Կողովներ կանաչեղենների պահեստի 5—6 և այլն:

ՄԻՆՉ ՄԻ ՏԱՐԵԿԱՆ ՅԵԲԵԽԱՅՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄՆՈՒԴ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԻՄԵՐ

- | | |
|---|----|
| 1. Սեղան | 1 |
| 2. Պահարան ամանների համար | 1 |
| 3. Կաթսա կաթ յեփելու | 2 |
| 4. Կաթսա կերակուր պատրաստելու | 1 |
| 5. Շիշեր կաթի համար 200 զրամ յուրաքանչյուրը | 50 |
| 6. Կորտիկա կողքերով մեխ (նբա) շիշերը ստոքելու համար | 3 |
| 7. Աման շիշերը լվանալու | 1 |
| 8. Ապակյա ամաններ կամ փոքրիկ պարկեր շաքարի ու այլ
մթերքների պահեստի համար: | . |

9. Գղալներ կերակրի ու թեյի	2
10. Բաժակներ	2
11. Զազարներ	2
12. Մարլա սեղանները ծածկելու (մետք)	3
13. Բամբակ շիշերը փակելու (կիլո)	1
14. Պրիմուս	1
Սենյակում, ուր մնում են հիվանդության մեջ կասկածելի յերեխաները, պետք և լինի՝ աթոռ, մահճակայ խեցի, լվացարան, պահուարան, դեղորայք, անհրաժեշտ սպիտակեղենն և այլն:	
Սպիտակեղենները լվացու ու մաքրելու համար ունենալ համապատասխան իրեր՝ տաշտակ, դուլցիք, սպիտակեղեններ կախելու պահարան և այլն:	
Առանձին պետք և մտածել սպիտակեղենի մասին՝ մինչ մի տարեկան յերեխաների, հետո 2—3 տարեկանների համար նեվար և այստեղ վորոշ ցուցմունքներ տար Միանգամայն հասկանալի յե, վոր յերեխաններին պետք և առանձովել անկողինների և շորերի համապատասխան քանակի սպիտակեղեններով: Դոնի յուրաքանչյուր սպիտակեղենից շապիկ, սավան, բարձի յերես, յերեսորբիչ, վերմակ և այլն ունենալ յերեքական, յեթե կարելի յե ամենի մշտական մանկամառուս ունենալ յերեխանների համար և առաջ շորեր:	
Մանկամառում անպատճառ պետք և ունենալ տեղատուփ ամենապետք զեղորայքով:	
1. Զերմաշափ յերեխանների տաքությանը հետեւելու	1
2. Զերմաշափ ջրի տաքությունը վորոշելու	1
3. Յոդ	50
4. Բամբակ բժշկական	200,0
5. Բամբակ հասարակ	400,0
6. Մարլա	5 մետր
7. Բինտ	20 հատ
8. Ցուղած թուղթ	5 թերթ
9. Տալկա, սողա, վաղելին և այլն:	
Ավելորդ չե այստեղ բերել յերեխանների համար սեղանների ու մահճակալների չափը:	
1 ¹ /2 մինչ 2 տարեկան յերեխանների համար սեղան (4 հոգու)	
Յերկարությունն ու լայնությունը	80×80 մմ.
Բարձրությունը	37—38 մմ.
2 ¹ /2 մինչ 3 տարեկան յերեխանների համար սեղան	
Յերկարություն,	120 մմ.
Լայնություն	70 մմ.
Բարձրություն	41 մմ.

Յերկարություն	80
Լայնություն	80
Բարձրություն	40
2 ամսականից մինչ 10 ամսական յերեխայի համար մահճակալ	
Յերկարություն	85 մմ.
Լայնություն	60
Ընդհանուր բարձրություն	93
Կողքի պատի բարձրություն	40
Վունիերի բարձրությունը մինչ ցանցը	46
Մահճակալի կողքի յերկաթե մասերի հեռավորությունը	
10 ամսականից մինչ 2 տարեկան յերեխանների մահճակալ՝	
Յերկարություն	95
Լայնություն	61
Ընդհանուր բարձրություն	95
Կողքի պատի բարձրություն	42
Վունիերի բարձրություն մինչ ցանցը	53
2 տարեկանից մինչ 3 տարեկան յերեխայի համար մահճակալ	
Յերկարություն	105
Ընդհանուր բարձրություն	86
Վունիերի բարձրություն	36
Մահճակալի վերի մասի բարձրություն	50
Լայնություն	61

VII

ՄԱՆԿԱՄԱՌՈՒՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ

Ճանկալի յե մանկամառուրի կազմակերպման համար բոլոր շահագրգուված մարմիններից ու կազմակերպություններից ընտրել մի հանձնաժողով կոմիտե ու նրան հանձնել հասարակական կարգով մանկամուռի կազմակերպման հետ կապված բոլոր հարցերն ու խնդիրները:

Կյանքի փորձը ցույց և տալիս, վոր այն մանկամառը, վորին հաջողվում և նման հանձնաժողովի կազմել ու նրա հետ ձեռքի տված աշխատել, անում և ավելի քիչ սխալներ ու հեշտությամբ և հաղթահարում մի շարք դժվագություններին: Դա միանգամայն հասկանալի յե, վորովհետեւ այս զեպքում մանկամառը սերտ կապված է լինում զյուղի ու կոլտանտեսության բոլոր կազմակերպությունների հետ:

Հանձնաժողովի կազմի մեջ պետք և ունենալ ներկայացուցիչներ կոլտանտեսության վարչությունից, գյուղխորհրդից, յերեխանների ծնողներից, սպառողական ընկերությունից, բժշկա սանիտարական առպա-

րիկում աշխատողներից, ցանկավի յե, յեթե կա կոնսուլտացիա, վերջինիս բժիշկը, կոմյերիտ բջիջի ու այլ կազմակերպությունների ներկայացուցիչները:

Հանձնաժողովը իր վրա յե վերցնում բոլոր նախագահամատական աշխատանքները: Տանում ե համապատասխան բացատրողական աշխատանք: Հայթայթում ե միջոցներ, մանկամսուրի համար գտնում ե համապատասխան շենք՝ վերջինս յենթարկում վերանորոգության և այլն:

Հանձնաժողովը զբաղվում ե ու ապահովում մանկամսուրը պետք յեղած քանակությամբ ինվենտարով, իրերով և այլն:

Հրավիրում ե առողջապահական բաժնի հետ միասին մանկամսուրի ծառայողներ: Ընդունում ծնողներից ընդունելության խնդիրներ: Բննում վերջիններս ու ընդունում համապատասխան քանակով յերեխաններ: Հանձնաժողովը ամեն միջոց ձեռք ե առնում մանկամսուրը ժամանակին բաց անել:

Մանկամսուրի բացվելուց հետո, հանձնաժողովը պետք ե շարունակի իր աշխատանքը:

Մանկամսուրի վարչունին ժամանակ առ ժամանակ պետք ե հաշիվ տա հանձնաժողովին: Վերջինս պետք ե քաջ ծանոթ լինի մանկամսուրի կյանքի ըրուր անց ու դարձին, նկատի թերություններն ու բացերը, միջոցներ ձեռք առնի այդ բացերը ժամանակին ու տեղն ու տեղը հեռացնելու:

Վերջապես, մանկամսուրային կոմիտեյի—հանձնաժողովի հիմնական խնդիրներից մեկն ե զբաղվել ժամանակավոր մանկամսուրը վերածելու մշտական մանկամսուրի:

VIII

ԺԱՄԱԿԱՎՈՐ ՄԱՆԿԱՍՈՒՐՆԵՐԸ ԴԱՐՁՆԵԼ ՄՇՏԱԿԱՆ

Ժամանակավոր մանկամսուրները հնարավորություն են տալիս կոլտնտեսունուն ազատ մամնակցել դաշտային բոլոր աշխատանքներին: Վերևում շեշտեցինք, վոր ժամանակավոր մանկամսուրները ցանկալի յե կազմակերպել հենց գարնանացանի սկզբին: Նա պետք ե աշխատի ամբողջ աւառը, մինչև դաշտային աշխատանքների վերջը: Թեև ժամանակավոր մանկամսուրների բերած ոգուտը շատ մեծ ե խորհ. ու կոլտնտեսություններում, բայց նրանցից յուրաքանչյուրը պետք ե աշխատի ժամանակավոր մանկամսուրը դարձնել մշտական: Բացի դաշտային աշխատանքներից, կոլտնտեսություններում կան մի շարք այլ աշխատանքներ, ուր կնոջ մասնակցությունն անհրաժեշտ է: Քանի դնում խորհ. ու կոլտնտեսություններում տնտե-

սության դանաղան ձյուղերը զարգանում ու աճում են: Աշխատանքի ասպարեզը լայնանում ե, աշխատավոր ձեռքերի պահանջը ավելանում: Բավական ե հիշել կաթնատնտեսություն, թոչնաբուծություն, բանջարանոցային աշխատանքներ և այլն, հասկանալու համար, վոր իրոք կնոջ մասնակցությունը կոլտնտեսության աշխատանքներում հարկավոր և ամբողջ տարվա ընթացքում:

Զգետք ե աչքաթող անել և այն հանգամանքը, վոր կինը մասնակցում ե գյուղի ու կոլտնտեսության հասարակական աշխատանքներին, պարտական ենք նրա համար ստեղծել բարեհաջող պայմաններ, վոր նա ել ավելի իր ուժերը նվիրի կոլտնտեսության ու հասարական աշխատանքներին:

Հիշված աշխատանքները կարող ե աշխատավոր կինը լրիվ կատարել, յեթե մենք նրան ազատենք ընտանեկան ու տնային հոգսերից՝ վոչ միայն ամառնային աշխատանքների ժամանակ, այլ և ամբողջ տարվա ընթացքում: Ուրիշ միջոցառումների շարքին, առաջնակարգ տեղ պետք ե բոնի ժամանակավոր մանկամսուրները դարձնել մշտական: Այն բոլոր կազմակերպությունները, առաջին հիրթին կոլտնտեսության առողջապահական բջիջն ու մանկամսուրային կոմիտեն, վորոնք կանչված են զբաղվելու մանկամսուրների կազմակերպման խնդրով, պետք ե ամեն միջոց ձեռք առնեն ժամանակավոր մանկամսուրը դարձնել մշտական: Յուրաքանչյուր աշխատավորի, մասնավորապես կոլտնտեսականների շահը պահանջում է ժամանակավոր մանկամսուրները դարձնել մշտական:

IX

ՎՎԵԼԻ ԼՈՒՐՃ ՈՒԵԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆԿԱՍՈՒՐՆԵՐԻ ԱՇԽԱ- ԽԱՑԱՆՔԻ ՎՐԱԿԻՒ

Մանկամսուրները կոլտնտեսություններում՝ բացի այն, վոր հնարավորություն են տալիս մայրերին մասնակցելու կոլտնտեսության աշխատանքներին, պետք ե լուրջ ուղաղրություն դարձնեն յերեխանների կրթության ու դաստիարակության վրա:

Յերեխանները մանկամսուրում պետք ե յուրաքանեն մի շարք զբական սովորություններ, ստանան այստեղ կոմունիստական կրթություն: Ամեն ու զարգանան առողջ ու ընդունակ սոց. շինարարության համար:

Յերեխայի կրթության խնդիրը պետք ե սկսել հենց նրա կյանքի առաջին որերից: Յերեխայի վրա ամենահզոր աղղեցություն ունեցողը միջավայրն է, նրա շրջապատը:

Մանկամսուրն աշխատավոր մայրերի համար նույնպես պետք ե լինի դպրոց: Նա պետք ե սովորեցնի մայրերին, թե ինչպես պետք է

յերեխային կերակրել, հսկել, կրթել, հոգատարություն տանել և այլն։ Պետք ե որինակներով ցույց տար, վոր փոքր յերեխային ել կարելի յե կրթել ու ճաղորդել մի շարք դրական սովորություններ, թերենք մի յերկու որինակ։ Մայրը ծծկեր յերեխային կերակրում և յուրաքանչյուր յերեք ժամը. զիշերվա ժամը 12-ից մինչ առավոտյա 6-ը տալիս հանգիստ։ Փորձը ու դիտողությունը ցույց են տալիս, վոր նըստան պայմաններում յերեխան սովորում ե յերեք ժամը մի անգամ զարթնել, մյուս ժամանակը մնում է հանգիստ։ Հանգիստ և պահում իրան և ամբողջ զիշերվա ընթացքում։ Այս որինակը պարզ ցույց է տալիս, թե ինչպես փոքր յերեխային կարելի յե ու պետք է հաղորդել դրական սովորություններ, սովորեցնել դիսցիպլինային։ Ուրիշ դեպքում մայրը յերեխային կերակրում է անժամանակ, ամեն լաց լինելիս։ Հետևանքը՝ յերեխան յուրացնում ե մի շարք բացասական սովորություններ, ընտելանում է լացը կապել կերակրվելու հետ։ Քանի գնում այս բացասական սովորությունը նրա մեջ լիորանում ե։ Այս փոքրիկ որինակներից կարելի յե յեղբակացնել, թե ինչպիսի մեծ նշանակություն ունի հենց ամենափոքր հասակից յերեխայի կրթության և դաստիարակության հարցը գնել կանոնավոր հիմքերի վրա։

Հենց մանկամուռից պետք ե նպաստել վոր յերեխաները սիրեն ու հարգեն աշխատանքը, սովորեն պաշտպանել ընդհանուրի շահը, վեր դասեն կողեկտիվի շահը, միշտ պատրաստ լինեն անձնականը նվիրելու ընդհանուրին։ Մրա հետ պետք ե շաղկապել այն բոլոր աշխատանքները, վորոնք նպաստում են յերեխաների ֆիզիկական առողջության։

Ունենալ մանկամուռի աշխատանքի ամենորյա ծրագիրը, ամեն աշխատանք կատարել ժամանակին ու լրիվ։ Պահել անխտիր ամեն տեղ միշտ մաքրության մեջ, յերեխաներին կերակրել ժամանակին։ Սննդի քանակը ու վորակը պետք ե համապատասխանի յերեխաների հասակին, նպաստի նրանց առողջ զարգացման և այլն։ Վորպիսզի մանկամուռը կանգնած լինի իր կոչման բարձրության վրա, պետք ե նրա աշխատանքի վորակը լինի բարձր։

Ազելորդ հնք համարում այստեղ կանգ առնել այն հանգամանքի վրա, վոր մանկամուռում միանգամայն բացակայելու յեն յերեխաների վրա կանչը, սաստումը, վախեցնելը, պատիժն ու ծեծը։ Պետք ե յենթադրել, վոր յուրաքանչյուր ծնող ու աշխատավոր հասկանում և դրանց բերած կորստաբեր մնասը։ Մանկամուռում չպետք ե յերեխաներից մեկին գովարանել՝ մյուսին հանդիմանելու համար և այլն։

Մանկամուռի աշխատանքի վորակը, յերեխաների կանոնավոր կրթության խնդիրը ահագին չափով կախում ունի մանկամուռի աշխատանքի վորակին։ Մոր կարծիքով այս «բացասական» մոմենտները ցույց են տալիս, վոր մանկամուռը հիմնակա-

հանջվում է կաղըեր նշանակելիս այս հանգամանքը ի նկատի ունենալ, նշանակելի նամանավանդ մանկամուռի քույրեր՝ դաստիարակություններ՝ այնպիսի անձնավորություններ, վոր բացի համապատասխան սոցիալական դրությունից, ընդունակ լինին կանոնավոր և ուղիղ կը թել ու դաստիարակել յերեխաներին։

Այն կրթությունը ու դաստիարակությունը, վոր յերեխան ստանում և մանկամուռում, պետք ե ստանա և ընտանիքում, վորպեսզի կրթությունն իրականում ունենա իր դրական հետևանքը։ Այստեղ մանկամուռը մեծ աշխատանք ունի կատարելու յերեխաների ծնող ների հետ, սաստավորապես մայրերի։

Մանկամուռը բանալուց առաջ պետք ե հրավիրել ծնողների ընդհանուր ժողովի։ Մանկամուռի ծառայողները մայրերին պետք ե մանրաւան ծանոթացնեն շենքի, իրերի, խաղալիքների հետ և այլն։ Մանրաւան ծանոթացնեն աշխատանքի ծրագրի հետ, պատմեն մանկամուռի կյանքը մանրամասն, թե յերը և յերեխան դալու մանկամուռ, ինչքան ժամանակ և մնալու, ինչպես և անցկացնելու որը՝ առավոտից մինչ յերեկո։ Հասկացնեն սայրերին, թե ինչպես են իրենք յերեխաներին մանկամուռում կերակրելու, կրթելու, դաստիարակելու և այլն։ Բացատրեն ծնողներին նրանց անելիքները, նրանց մասնակցությունը մանկամուռի աշխատանքներին։ Մասնավորապես բացատրել ծնողներին, թե ինչպես նրանք ընտանիքում պետք կրթեն իրենց յերեխաներին։

Մանկամուռների աշխատանքի հետևանքներն ուսումնասիրելիս՝ մենք տեսնում ենք, վոր այնտեղ, վորակը աշխատանքի վորակի վրա մեծ ուշագրություն են դարձնում, արդյունքներն ավելի մեծ են լինում։ Հետաքրքրական ե մեջ բերել մի մանկամուռի հաշվետվությունից մի կտոր։ Ծնողների յեղբափակման ժողովին բոլոր մայրերը միաձայն հաստատում են, վոր առաջին անգամ գյուղում կազմակերպված ժամանակի մանկամուռը մանկամուռը աշխատեցնել համարյա չհիվանդացան, այն ինչ մանկամուռը չհաճախողները հիվանդության ավելի զեղքեր ավին։ յերեխաներն ավելի առողջ ու կայտառ են, ավելացան նրանց կը շիռը։ Պետք ե մյուս տարի յել կազմակերպել մանկամուռը, և ցանկալի յել յերկար ժամանակով։ Մայրերից մեկը, վորպես բացասական յերեսույթ, շեշտում ե հետեւյալ հանգամանքը՝ «համաձայն եմ, վոր մանկամուռը տվեց շատ մեծ ոգուաները, բայց չափետք ե մոռանալ նրա տվածք և բացասական կողմերը, գեռ իմ յերեխայի չորս տարին չի լրացել պահանջում են առանձին աման, բաժակ, զգալ, ուտելուց առաջ ձեռք ըվանալ, շրբերը մաքուր պահել և այլն»։ Մոր կարծիքով այս «բացասական» մոմենտները ցույց են տալիս, վոր մանկամուռը հիմնակա-

նում ուղիղ կրթել և յերեխաներին, իսկ ծնողների մեջ տարվել և անբարար բացատրողական ու կուլա կրթական աշխատանք:

Մանկամուրի աշխատանքների վորակի բարձրացման համար պետք և բոլոր աշխատանքները տանել վարու ծրագրով: Յերեխաներին մանկամուրի բացման առաջի որերին բաժանել խմբերի ըստ նրանց հասակի, որինակ. յեթե մինչ մեկ տարեկան յերեխաներ կան, նրանց կազմակերպել մի խմբում, հասակավորներին մյուս: Խմբերի մեջ նպատակահարմար բաժանել սենյակները. աշխատել, վոր փոքրերին չխանդարեն հաստկավոր յերեխաները և այլն: Յերեխաների կրթության գործն ուղիղ հիմքերի վրա դնելու համար, մանկամուրի քույրերը պետք և հաճախեն ծնողների աները, տեղն ու տեղը ծանոթանան յերեխայի ու ծնողների կենցաղի ու նիստ ու կացի հետ: Այս հանգամանքը հնարավորություն կտա ճիշտ մատենալ յերեխաների կրթության հարցին ու ծնողների հետ միասին մշակել կրթության ընդհանուր պայմաններ:

Ծանոթանալով յերեխաների նիստ ու կացին, նրանց սովորություններին, մանկամուրի դաստիարակները յուրաքանչյուր յերեխայի վերաբերյալ պետք և վորոշեն ինչ սովորություններից ազատել ինչ սովորությունները ու հակումներ հաղորդել և այլն:

Շատ մեծ համբերությամբ ու հետևողականությամբ պետք և յերեխաներին ձեռք քաշել տալ մի շարք բացասական սովորություններից—ծծուկից, ձեռքի վրա նրանց ման ածելուց և այլն:

Հասակավոր յերեխաներին սովորեցնել ուտելուց առաջ ձեռքերը լվանալ բերանները ողողել և այլն: Քույրերին պետք և ունենալ առանձին տեսքը, ուր նշանակում են իրենց անելիքներն ու կատարած աշխատանքները:

Պետք և մանրամատան կազմել որվա աշխատանքների պլանը. յերեխաների ընդունելության ժամը, մնադի, քնի, խաղալու և այլն ու խստիվ հետեւել, վոր պլանը չխախտվի, աշխատանքները կատարվեն ըստ պլանի: Միայն այն գեպը ուղարկում յերեխաները կընտելանան կարդ ու կանոնի:

X

ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ (ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ) ՄԻՆԻՄԱՒ ՄԱՆԿԱՍՍՈՒՐՆԵՐՈՒՄ

Սանիտարական մինիմում ասելով հասկանում ենք մի շարք հասրակ, հնարավոր միջոցառումներ, վորոնց կիրառումը կյանքի մեջ նպաստում և առողջարար պայմաններին: Յուրաքանչյուր գործարանում, կոլտնտեսության մեջ, հիմնարկում և այլն, յելնելով՝ կոնկրետ պարագաներից, կազմել սանիտարական մինիմում ու անցկացնել կյանքի մեջ:

Հիմնականում մանկամուրի սանիտարական մինիմումը պետք և լինդզրկի աշխատանքի հետևյալ ասպարեզը. պայքար մղել մանկամուրում վարակիչ հիվանդությունների գետ, մաքուր ողի ու լույսի համար, մաքուր պահել յերեխաներին, հետեւել ու միշտ մաքրություն պահել մանկամուրի շենքում: Մաքուր պահել մանկամուրի ամբողջ գույքն ու ինչքը:

Կանոնավոր հիմքերի վրա դնել սննդի հարցը, վերջապես, յերեխաների աշխատանքի ռեժիմը պետք և համագատամխանի լիովին մեր պահանջներին—նպաստի յերեխաներին տալ կուռնիստական զատարարակություն:

Վարակիչ հիվանդությունների դեմ կովելու համար պետք և մանկամուրում մի շարք միջոցառումներ կիրառել: Ամեն միջոց ձեռք պետք և առնել, վորպեսզի վարակիչ հիվանդությունները մուտք չունենան մանկամուրը: Ամենից առաջ մանկամուրը պետք և ընդունել միայն առողջ յերեխաներին: Հիվանդ յերեխա վոչ մի զեղքում չընդունել, միջոցներ ձեռք առնել այդպիսի յերեխային բժշկել: Յերեխաներին մանկամուր ընդունելուց առաջ անպատճառ յենթարկել բժշկական քննության ու հետազոտության: Միանդամայն ցանկալի յերեխաներին բժշկը նայի, վոր ամեն առավոտ մանկամուր ընդունելուց առաջ, յերեխաներին բժշկը նայի, վորպեսզի, յեթե մեկն ու մեկը հիվանդ և կամ կասկածելի, իսկույն առանձնացնել: Յուրաքանչյուր ծնող, յերեխան կամ ընտանիքի անդամներից մեկն ու մեկը հիվանդանում ե, պետք և հայտնի մանկամուրը: Միայն բժշկի թույլտվությամբ: Ցանկալի յերեխաներին բաժանել յերկու կամ յերեք խմբի՝ մինչ վեց ամսվան, մինչ մի տարեկան և մեկ տարեկանից մեծերին: Ամեն յերեխա պետք և ունենալ իր առանձին մահաճակալը: Յերեխայի անի շորերը մանկամուրում պահել առանձին պարկի մեջ, հազցնել մանկամուրի շորեր և այլն:

Այս միջոցառումների կիրառումը կնպաստի հիվանդությունների, մասնավորապես վարակիչ հիվանդությունների դեմ: Յեկ ծնողները և մանկամուրի աշխատողները պետք և մասնակցեն այս խնդրի դրական լուծման:

Պետք և աշխատել վոր մանկամուրի շենքում միշտ լինի մաքուր ող ու պետք քանակությամբ լույս:

Ցանկալի յերեխանալ բակ, բակում բավական կանաչեղեն, լավ և պարտեզ: Բակը, պարտեզն ու շենքը միշտ պահել մաքուր: Սենյակների պատուհանը, վորտեղ միշտ լինում են յերեխաները, պետք և զարձած լինեն զեպի արեվի ճառագայթները: Լուսամուտնե-

ըլ պետք ե ունենան բավական քանակությամբ ողանցքները կազի յի-
դանակներին ցանկալի յի, վար յերեխաները միշտ լինեն ողում,
բակում, պարտեզում և տեսել, խսել, քնիլ ու աշխատանքները կատա-
րել բացողյա:

Եատ մաքուր պետք ե պահել արտաքնօցները: Վերջիններս
պետք ե առանձնացած լինեն: Միջոցներ ձեռք առնել վոր վոչ մի
ուեպում կեղտուության հոտ չլինի:

Գառարանները վառել սենյակները մաքրել ու կարգի բերել,
այս բոլոր աշխատանքները պետք ե կատարել յերեխաների բացա-
կայության ժամանակ, կամ մինչ յերեխաների հավաքվելը կամ յերբ
նրանք զբաղված են բացողյա:

Առանձին պահարաններ կամ այլ պահեստի տեղեր ունենալ սպի-
տակեղենի համար:

Նայելով տվյալ մանկամսուրի շենքին, բակին ու այլ պայման-
ներին պետք ե ամեն միջոց ոզտագործել վորպեսզի յերեխաները
միշտ լինեն մաքուր սղում և ունենան բավական չափով լույս:

Սանիտարական մինիմումն իրականացնելիս, առանձին ուշագրու-
թյուն պետք ե դարձնել մանկամսուրների շենքի մաքրության վրա:
Ամենից առաջ շենքի դռան մոտ պետք ե ունենալ ցանց կամ մի այլ
հարմարություն՝ վոտնամանները ներս մտնելուց առաջ մաքրելու:

Սենյակների հատակը պահել միշտ մաքուր: Որը 2—3 անգամ
հատակները սրբել խոնավ լաթովի Դոնե ամիսը յերկու անգամ խո-
նավ կերպով փոշուց մաքրել առաստաղը, տնպատճառ յերեխաների
բացակայության ժամանակ:

Գունե տարին յերկու անգամ սպիտակացնել շենքի պատերը:
Տասն որը մի անգամ լվալ պատուհանները, ծածկել համապատասխան
ցանցերով, վորպեսզի ճանձները մուտք չունենան մանկամսուրի
շենքը: Իրերից, ինվենտարից, պատուհաններից և այլն ամեն որ խո-
նավ լաթով հեռացնել փոշին, ամիսը մի քանի անգամ մաքրել մահճա-
կաններ:

Սրտաքնոցը առնվազն յերեք մետր հեռու պետք ե լինի մանկա-
մսուրի շենքից: Նմանապես վորքան կարելի յե հեռու պետք ե լինի
աղբի համար պատրաստած առանձին արկղ կամ փոս: Կոլտնտեսություն-
ներում ամառային մանկամսուրներում շենքից զուրս պետք ե լվացք
կատարել ու շորեղենները չորացնել: Նմանապես առանձին տեղ
պետք ե ունենալ կերակուր պատրաստելու, այսինքն, խոհանոցի հո-
մար: Խոհանոցի վրա նույնպես մեծ ուշաղրություն պետք ե դարձնել
նրան մաքուր պետք ե պահել:

Մաքուր և ծածկված պիտ պահել սննդամթերքները և կերա-
կը ամանները:

Պետք ե ամենախստիվ կերպով կովել միջատների դեմ: Այս դեպ-
քում ամեն որ մաքրել մահճակալները, շատ շուտ շորեր փռիել, շո-
րեն անզատածառ ջրում յիփել: Յեթե այս աշխատանքը սիստեմատիկ
կերպով կատարվի, այն ժամանակ միջատներից կարելի յե աղատվել:
Բակը, պարտեզն ու մանկամսուրի շենքը պահել միշտ մաքուր, վոչ մի
բան չթափել մասնավորապես ուտեղեղենների մնացորդները, վոր-
պեսզի ճանձներ ու այլ միջատներ չհավաքվեն:

Յերեխաների առողջապահության տեսակետից մեծ նշանակու-
թյուն ունի կահակարասիքի ու ինվենտարի մաքրությունը:

Յուրաքանչյուր յերեխա պետք ե ունենա յուր առանձին յերես-
որբիչը, սպիտակեղենը:

Բարձերը, վերմակները, անկողիները հնգորյակում մի անգամ
թափել, մաքրել փոշուց:

Լվացվող խաղալիքները շուտ շուտ լվանալ: Ասանեղենները պա-
հել փակ տեղ: Ուտեղուց հետո տաք կամ յեփած ջրով մաքրել:

Առանձին պետք ե հետեղել յերեխաների մարմնի մաքրության:
Այս ասպարեզում շատ մեծ աշխատանք պետք ե տանել և յերեխանե-
րի և նրանց ծնողների հետ: Յերեխային պետք ե բերել մանկամսուր
մաքուր, մաքուր շորեր հացըրած: Ամենաքիչը հնգորյակում մի ան-
գամ յերեխաներին լողացնել: Սնունդ ստանալուց առաջ ու հետո յե-
րեխաների ճեռները լվալ: Հնակելի վոր մաքերը միշտ խուզած լինեն:
Յեղունդները կտրած ու միշտ մաքուր:

Առանձին ուշագրության առարկա պետք ե լինի յերեխաներին
աննդի պատրաստան, կերակրելու ու որվա սեամի ինչինը: Ինչպես
վերեկում հիշեցինք, յուրաքանչյուր մանկամսուրում նախորուք պետք
ե փորոշի ընդունելության, կերակրելու, խաղալու, քնելու, աշխա-
տանքի և այլ ժամերը:

Ինչ վերաբերվում է սննդին՝ յուրաքանչյուր մանկամսուր ամ-
պատճուռ տեղի բժշկի մասնակցությամբ պետք ե կազմի, ըստ յերե-
խաների հասակի, ուտեղեղենների քանակը, վորակը, թեր, սուրճ, նա-
խաճաշ, ճաշ և այլն պետք ե առնվազն տասնորվա տասնաշուց կազմել:
Վոր խոհանոցը ըստ այդ կարգագրության և պատրաստի յերեխանե-
րի համար պահանջմենք սնունդն ու կերակուրը: Խոհանոցը, վոր
պետք ե լինի առանձին և գորտեղ պատրաստում են յերեխաների
համար սնունդ, վոչ մի գեղքում ծառայելու չե ննջարանի և կամ
այլ նպատակների համար. նա պետք ե լինի միայն խոհանոց: Ամառը
սնունդն ու ուտեղեղեններն անպատճառ պաշտպանել ճանձերից: Կաթ
ստանալ յերեխաների համար միայն առողջ կողից: Մանկամսուրի
բոլոր աշխատաղները խստիվ պետք ե հետեղեն, վոր յերեխաները
սնունդ ստանան մաքուր ու լավ պատրաստված:

Այստեղ մենք շատ հարեվանցի կերպով նշեցինք մի շարք միջոցառումներ, վորոնց կիրառումը մանկամսուրում առանձին մեծ ծախս չի պահանջում, միևնույն ժամանակ նրանց կիրառումը կնպաստի յերեխաների կյանքի ու կենցաղի պայմանների առողջացման:

Սանիտարական մինիմումով պետք է հետաքրքրվեն ու նպաստեն կյանքի մեջ անցկացնել բոլոր շահագրգուված կազմակերպությունները, ամենից առաջ մանկամսուրի աշխատողները, ծնողներն ու մանկամսուրի կից կոմիտեն (հանձնաժողովը): Դործնականում սանիտարական մինիմումը մանկամսուր անցկացնելու համար, պետք է մանրամասն ծանոթանալ մանկամսուրի անիտարական դրության հետ: Մանրամասն գրի առնել բակի, պարտեղի, շենքի, խոհանոցի՝ յիթե կա, և այլ պայմանների սանիտարական դրությունը: Հետո մանրամասն նշել, թե ինչ միջոցառումներ են հարկավոր հիշված սանիտարական բացերը վերացնելու, վորոշել, ինչպես իրականացնել այդ միջոցառումները, ինչքան ժամանակվա ընթացքում, անզաաճառ ցույց տալ ու վորոշելով պետք է իրականացնի ու կյանքի մեջ անցկացնի այս կամ այն միջոցառումը:

Հասարակական կարգով ստուգել—վորքան հաջող են տարվում վորոշած հարցելն ու խնդիրները: Սանիտարական մինիմումի կիրառման կազմակերպչական ամենալավ ձեն և մանկամսուրում աշխատող կոլեկտիվը, հանձնաժողովը, հերթապահ ծնողները, և այլն կնքեն սանիտարական մինիմույը կյանքի մեջ անցկացնելու սոցիալիստական պայմանագիր: Վերջինս կատարեն լիովին, կիրառելով աշխատանքի նոր ձեմեր—սոցմբցումն ու հարգածայնությունը:

XI

ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՆԿԱՄՍՈՒՐՆԵՐՆ ԱՊԱՀՈՎԵԼ ԿԱՂՔԵՐՈՎ

Ավելորդ և ապացուցել վոր մանկամսուրի աշխատողների վորակից ու պատրաստականությունից և կախված մանկամսուրի աշխատանքների վորակը: Մանկամսուրների կաղրերի խնդրով կոլտնտեսություններում զբաղվելու յեն իրենք՝ կոլտնտեսություններն ու ուսուցչներ:

Ռայոնի առքաժինը նախորոք պետք է պարզի ուայոնի կարիքն այս ասպարեզում: Հարցը դնի համապատասխան մարմինների առաջ: Հայթնայթի միջոցներ ու բաց անի մանկամսուրների համար վարիչներ պատրաստելու կուրսեր: Կուրսեր պետք է ուղարկել կոլտնտեսություններն ու ուսության անդամ ակտիվ մայրերից:

Այս խնդրի սուտից չի կարելի թեթեվ անցնել, պետք է բազմակողմանի քննության առնել ուղարկելիք կնոջ սոց, դրությունը,

նրա բնավորությունը, նրա կարողությունները: Լով և հարցը վըճ, ունի կոլտնտեսականների ընդհանուր ժողովում:

Կուրսերի տեղողությունը, ծրագիրը պետք է վորոշեն տեղական ույոնական կազմակերպությունները, բայց կուրսերի աշխատանքները կազմակերպել այնպես, վոր յուրաքանչյուր կուրսում սովորողը, բացի տեսական գիտելիքներից, ստանա և գործնական տեղեկությունները: Ցուրաքանչյուր կուրսեր ավարտող պետք է ընդունակ լինի իրագործել այն բոլոր պարտականություններն ու խնդիրները, վորոնց մասին մանրամասն հիշված է վերեկում:

Բացի մանկամսուրի վարչուուց, իրենց կոչման վրա կանգնած լինեն և մացյալ պաշտոնյանները: Թե վորքան լուրջ ու պատասխանատու պարտականություն և դրվում մանկամսուրի յուրաքանչյուր ծառայողի վրա, դա պարզ է մինչեւ այժմ մեր թված խնդիրներից:

Միանգամայն պախարակելի յե այն յերեկույթը, յերբ այս հարցի վրա նայում են թեթեվակի. մանկամսուր են ուղարկում աշխատելու կամ խիստ յերիտասարդ ուժեր և կամ խիստ հասակավոր. յերկու գեպօրմն ել անփորձ ու աշխատանքից անտեղյակ. պարզ ե, վոր այս գեպքում մանկամսուրի աշխատանքները կաղելու յեն: Կոլտնտեսությունը պետք է մանկամսուր ուղարկի այնպիսի կանաց, վորոնց կարողանան արդարացնել իրենց վրա դրված լուրջ պատասխանատվությունը:

Զգետք և մոռանալ, վոր մանկամսուրի աշխատանքները կազմում են կոլտնտեսության աշխատանքների մի մասը: Մանկամսուրի կոլեկտիվը պետք է լինի ընդունակ կապ հաստատելու ծնողների, բժշկասանիտարական ու այլ կազմակերպությունների հետ: Ներգրավել աշխատանքներին ակտիվ կոլտնտեսականներին: Ծնողների աչքն ու ուսությունը միշտ պետք է լինի մանկամսուրում: Այստեղ մեծ անելիքներ ունեն բժշկասանիտարական ասպարեզում ծառայողները: Յեթե կոնսուլտացիա կա, բժշկական կայան կա, վերջինիս բժիշկները պարտական են կապ հաստատել մանկամսուրի հետ: Իրենց մշատկան հսկողության տակ առնեն մանկամսուրը: տան համապատասխան ցուցմունքներ. հետեւ վոր այդ ցուցմունքները կատարվեն ժամանակին ու լրիվ:

Զկա մանկամսուրի աշխատանքների մեջ մի ասպարեզ, վորտեղ բժշկի մանակցություն անհրաժեշտ ու ոգտակար չինի: Բայցի անմիջական բժշկական հետազոտություններից ու հսկողությունից, բժժիշկը պետք է ակտիվ մասնակցի աշխատանքների ծրագրի կազմում ու իրացման: Ողնի մանիտարական մինիմումը կյանքի մեջ անցկացնելու խնդրին: Կաղրերի խնդրիը դրական կվճռվի, յեթե զյուղի ու կոլտնտեսության կուս. ու հասարակական կազմակերպություններն իրենց հսկողության ներքո վերցնեն մանկամսուրի աշխատանքները,

հետեւն նրանց աշխատանքներին, ցույց տան մանկամսուրի թույլ կողմերը ու բացերը և ուղղեն տեղն ու տեղը:

Այստեղ ևս լուրջ անելիքներ ունի մանկամսուրի կից ու նրա աշխատանքներին ոգնող հանձնաժողովը: Նրա ակտիվ մանակցությունից և զգալի չափով կախված մանկամսուրի աշխատանքների վորակը:

XII

ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՄ ՎԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԿՈՆԹՈՒ- ՏԱՑԻԱՆԵՐ, ԿԱՔՆԱԽՈՀԱՆՈՑՆԵՐ

Մանկամսուրը մոր ու մանկան առողջության պաշտպանության գործի մի ողակն է: Մոր ու յերեխայի պաշտպանությունը պահանջում է նրանց համար կազմակերպել կոնսուլտացիաներ, կաթնախոհանոցներ ու լավ հիմքերի վրա դրված ծննդաբերության ոգնություն: Առանց այս պայմանների, գյուղերում, խորհ. ու կոլտնտեսություններում ունինալ միայն մանկամսուրներ, ասել ե, ինպին մատենալ միակողմանի: Որինակ՝ ծննդաբերության ոգնությունը չդնել համապատասխան հիմքերի վրա, դա ասել ե մեծ վնաս հացնել և աշխատավոր կանանց և մատաղ սերնդին: Այս իսկ պատճառով պետք ե լուրջ ուշադրություն դարձնել խորհ. ու կոլտնտեսություններում մոր ու մանկան պաշտպանության գործի այլ խնդիրների վրա: Յերեխայի առողջության մասին պետք մտածել գես սկզբնական շրջանից: Հղի կինը պետք է գտնվի բժշկական հսկողության ներքո: Դյուղերում ու կոլտնտեսություններում պետք ե ստեղծել ճնարավորություն ու կազմակերպել յերեխաների ու մայրերի համար կոնսուլտացիաներ, Դյուղերում քանի դնում կոնսուլտացիաների թիվը ավելանում ե. դա միանդամայն հականալի յն, վորովհետեւ նրանց բերած ոգուտը շատ մեծ ե և մեր բուռն տնտեսական վերելքի ժամանակ կոնսուլտացիաների թիվը չի կարող չբազմանալ: Կոնսուլտացիան մի բժշկական հիմնարկ ե, ուր հղի կինը, մայրն ու յերեխան մասնագետ բժշկից կատանան իրանց պետք բոլոր խորհուրդներն ու ցուցմունքները:

Ամենափոքր կոնսուլտացիայում, բայց տեխնիկական ծառայողից, պետք ե լինի մի բժիշկ-մասնագետ ու հատուկ բժշկական քույր, վորպես բժշկի ողնական ու հետազոտական աշխատանքներ կատարող:

Յուրաքանչյուր աշխատավոր հղի կին պետք ե հաճախի կոնսուլտացիա և ստանա համապատասխան խորհուրդներ ու ցուցմունքներ, վորպեսզի և ինքը լինի առողջ և յերեխան բարեհաջող աճի: Հղի կանանց ոգնության կանոնավորումը կնպաստի ծննդաբերության նորմալ ընթացքին, կպակասեցնի ծննդաբերությունից հետո տեղի ունեցող

մի շարք հիվանդություններ, զգալի կիջնի յերեխաների մահացութեաքերի տոկոսը:

Յերեխան ծնվելուց հետո, մայրը պետք ե հաճախի կոնսուլտացիա իր յերեխայի հետ: Կոնսուլտացիան յերեխային վերցնում ե յուր հսկողության ներքո, հետևում, թե ինչպես ե աճում, զարդանում յերեխան, մորը տալիս ե պետք ցուցմունքներ, սովորեցնում՝ ինչ զես կերակրել յերեխային, ինչպես հսկել ու հոգատարություն տանել և այլն:

Կոնսուլտացիան պետք մորը ոգնի յերեխային զերծ պահելու ընդհանրապես հիվանդություններից, մասնավորապես յերեխայական վարակիչ հիվանդություններից: Կոնսուլտացիայի քույրը հաճախելու յե նորածնի տունն ու ընտանիքը, ծանոթանալու յերեխայի ընտանիքի կենցաղի ու կյանքի պայմանների հետ, յենելով կոնկրետ տըվյալներից, տալու ցուցմունքներ, թե ինչպս պետք ե հսկել ու խնամել յերեխային, վորպեսզի վերջինս աճի ու զարգանա առողջ ու նորման նպաստելու յերեխայի ընտանիքի կենցաղի առողջացման:

Յուրաքանչյուր տարվա յեղած հաշվեալությունները ցույց են տալիս, վոր կոնսուլտացիաների կատարած աշխատանքը մոր ու յերեխաների պաշտպանության ասպարիզում մեծ են: Զափազանցություն չի լինի, յեթե շեշտենք, վոր կոնսուլտացիաները շատ ու շատ մայրեր ու յերեխաներ խլել են մանվան ճանկերից ու շարունակում են խլել

Ցանկալի յե կոնսուլտացիայի կից ունենալ կաթնախոհանոց, ուր կոնսուլտացիայի բժշկի պատվերով յերեխաների համար պատրաստվում են զանազան սննդեղեններ՝ պատրաստած կաթից: Բժիշկը քըննելով յերեխային ու մորը, յերբ տեսնում ե, վոր կամ մոր կաթը անբավարար ե կամ յերեխան արգեն լրացուցիչ սննդի կարիք ունի, վորոշում ե ինչ և ինչքան տալ: Կաթնախոհանոցը պատրաստելու յե ու բավարարելու վերջինս:

Ավելի քան ցանկալի յե կոնսուլտացիայի կից ունենալ թե չունեոր մայրերի համար, և թե կոլտնտեսության մեջ, կոլտնտեսության անդամների համար (ծծկեր յերեխա ունեցող մայրերի) հատուկ սեղանատուն, ուր մայրերը ստանում են համապատասխան սնունդ: Վերջինս կնպաստի մոր կաթի քանակի ու վորակի լավացման:

Յուրաքանչյուր կոլտնտեսության մեջ, վորտեղ չկա կոնսուլտացիա, առբջիջը պետք ե զբաղվի կոնսուլտացիայի կազմակերպման ինդրով, աշխատանքի քաշի զյուղի ու կոլտնտեսության բոլոր կազմակերպություններին:

Կոնսուլտացիայի հիմնական աշխատանքներից մեկն ե ակտիվ մասնակցություն ցույց տալ մանկամսուրների կազմակերպման, մասնակցել նրանց աշխատանքներին, սերտ կապ հաստատել նրանց հետ

ու մանկամսուրի ըոլոր աշխատանքները վերցնել իր բժշկական հըսկողության ներքո:

Հիշեցինք, վոր գյուղում ու կոլտնտեսություններում պետք ե լավ հիմքերի վրա դնել ծննդաբերության ոգնության գործը: Գաղտնիք չե, վոր գյուղերում մինչև այժմ, նույն իսկ բժշկական ոգնություն յեղած վայրերում, նղի աշխատավոր կանայք դիմում են ծննդաբերության ժամանակ զանազան դաշտակների ու պառավ կանանց: Վերջիններս, չունենալով համապատասխան պատրաստություն, կանանց ու յերեխաներին միայն վնաս են հասցնում: Ավելորդ և այստեղ մասրամասն կանգ առնելը թե այդ զայտակներն ու պառավները, վորոնք իրենց հաշվում են ծննդաբերության գործի մասնադիմուներ, քանի քանի մայրերի հիվանդության, դժբաղդության ու մահվան պատճառ են զառել:

Դայակների ու պառավների այդ խարդախություններին պետք ե վերջ տար պետք և աշխատավոր կանանց հասկացնել նրանց հասցրած վնասները, զուգնթացաբար պետք և միջոցներ՝ ձեռք առնել ծննդաբերության գործը կանոնավորելու համար: Ամենից առաջ պետք և հրավիրել համապատասխան պատրաստականություն ունեցող մանկաբարձութիւնը: Վերջինս պետք և աշխատի բժշկի հսկողության ներքո:

Կոնսուլտացիայի կամ բժշկական կայանի կից ծննդաբերության համար ունենալ առանձին մահմակալներ ու հարմարություններ: Վորտեղ հնարավորություն կա, իսկ վորտեղ մինչև այժմս չկա, պետք և ստեղծել այդ հնարավորությունները, ծննդաբերության բոլոր դեպքերը ընդգրկել հիվանդանոցում, կոնսուլտացիայում կամ բժշկական կայանում և կամ բժշկի կամ մանկաբարձություն ձեռքերով:

Մանկամսուրները, կոնսուլտացիաները, կաթնախոնանոցները, ծննդաբերության գործի կանոնավորումը և այլն նպաստում են կոչ ու յերկխայի կյանքի ու կենցաղի բարելավման ու առողջացման: Նրանք հիմնականում նպաստում են, մի շարք այլ միջոցների հետ միասին, կոչ ազատազրման ընտանեկան ու տնային հոգսերից: Հիշված հիմնարկներն ու միջոցառությունները խորհ, ու կուտնահետություններում միենույն ժամանակ նպաստում են վերջիններիս ծրագրի իրականացման, վորովհետև, այս դեպքում կոլտնտեսությունների անդամ աշխատավոր կանայք միանդամայն հնարավորություն կստանան իրանց նվիրել տնտեսության աշխատանքներին, հնարավորություն կունենան ակտիվ մասնակցելու գյուղի ու կոլտնտեսության հասարակական աշխատանքներին:

Խորհ, ու կոլտնտեսություններում պետք և հաղթահարել բոլոր դժվարություններին, միջոցներ ձեռք առնել մոր ու մանկան առողջության պաշտպանության գործը լավ հիմքերի վրա դնելու. մասնա-

վորապես կազմակերպել ժամանակավոր ու մշտական մանկամսուրներ: Աշխատավորության շահերը դա յե պահանջում:

* *

Մանկամսուրների, կոնսուլտացիաների ու այլ հիմնարկների ու միջոցառությունների կազմակերպման համար պետք և ապահովել աշխատավոր մասսայի մասնակցությունը, Անհեթեթություն և մտածելը անգամ մանկամսուրներ, կոնսուլտացիաներ կազմակերպել ու լավ հիմքերի վրա դնել առանց աշխատավորության լայն խավերի ակտիվ միջամտության ու մասնակցության:

Նախապատրաստական աշխատանքները պետք և այնպէս կազմակերպել, վոր բացատրողական աշխատանքը տարվի շատ լայն կերպով, վոր յուրաքանչյուր կոլտնտեսական շատ լավ իմանա ու հասկանա բացվելիք հիմնարկի նպատակը, նշանակությունն ու անհրաժեշտությունը: Յուրաքանչյուր աշխատավոր կին ներդրագվի այս աշխատանքներին ու ակտիվ մասնակցություն ցույց տա:

Աշխատավոր կանանց կենցաղի վերափոխումն ու դնելը նրան սոցիալիստական հիմնքների վրա—դա իրանց, աշխատավոր կանանց, բանվորների ու գեղջկուհների գործն ե:

«Բանվորների ազատագրումը պետք և լինի քանվորների, իրանց գործը ու նժանապիս և կանանց-բանվորուհների ազատագրումը պետք և լինի իրենց, կանանց—բանվորուհների գործը: Կանայք իրանք հոգս պետք և տանեն այդպիսի հիմնարկների զարգացման, և կնոջ այն գործունեյությունը հիմնովին կփոխի նրա կապիտալիստական հասարակաբուժ (ունեցած) հին գրությունը, ասում և ընկեր կենինը:

Ցեվ դա միանգամայն ուղիղ ե:

Աշխատավոր կանայք իրանք առաջինը պետք և մասնակցեն այս ինպիրի իրականացման: Մորթիվզայի յենթարկեն իրենց ու այլ հասարակական կազմակերպությունների ուժերն ու տվյալ խորհ, ու կուտնահետությունում գրական գնուեն մոր ու մանկան պաշտպանության խնդիրը, մասնավորակես մանկամսուրներ կազմակերպելու: Մեր յերկրի շահենքած հաջողությունները, կուտնահետությունների անուն ու զարգացումը հանդիսանում են գրավական մեր առաջ զրված խնդիրները գնուելու գրականապես Պետք ե, ինչպիս աշխատանքը յուրաքանչյուր ասպարիզում, նմանապես այստեղ առաջնորդվել աշխատանքի նոր ձեռքով՝ սոց. մրցմամբ ու հարմածայնությամբ:

Հենվելով կուտակցության ու Խորհրդային իշխանության ցուցանությունների վրա, տանելով լայն բացատրողական աշխատանքներ, սոց. մրցմամբ ու հարվածայնությամբ առանցվել խորհ, ու կոլտնտեսություններում մանկամսուրներ, կոնսուլտացիաներ և մանկական հրավարակներ, ոջախներ կազմակերպելու հարցը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Առաջարանի փոխարեն	1
2. Խորհրդների յերկրում սոցիալիզմ ենք կառուցում	3
3. Կոլխոզուհին—սոց. շինարարության ասպարիզում	5
4. Մանկամտերները—կոլտանտեսություններում նպաստում են արդինպահանի իրազործման	7
5. Ինչ է մանկամուրը: Ինչ էյին խոսում նրա մասին առաջ ու այժմ 10	
6. Կոլտանտեսություններում կազմակերպել ժամանակավոր մանկամուրներ	12
7. Ինչպես կազմակերպել կոլտանտեսություններում մանկամուներ .	17
8. Մանկամուրային կոմիտե	25
9. Ժամանակավոր մանկամուրները դարձնել մշտական	26
10. Ավելի լուրջ ուշադրություն մանկամուրների աշխատանքի վորակին	27
11. Սանիտարական մինիմում մանկամուրներում	30
12. Կոլտանտեսությունների մանկամուրներն ապահովել կադրերով .	34
13. Կոլտանտեսություններում կազմակերպել կօնսուլտացիաներ, կաթնախճանոցներ	36
Հեղինակը շատ լայն կերպով ուսուվել և մի շարք գլխավորապես հետեւալ աղբյուրներից՝	

1. В помощь работникам сельских ясель, второе издание.
2. А. Богат—Ясли совхозов и колхозов в борьбе за производственный план.
3. Протоклитов—Нужны ли колхознице летние ясли?



Отв. редактор
Д. Г. Явакян
Техн. редактор
Г. Маркарян.

№ 2691
ДС-58

Сд. в набор 20.VII—1932 г.
Сд. в печать 25/X—1932 г.
Об'ем 2^{1/2}печ. листа
Тираж 2000 экз.

Уполномочил № 1702 Газ.-кин. тип. СККПО. Статформат А5-148+210 Заказ № 4342
Гор. Ростов на Дону.

«Ազգային գրադարան



NL0275720

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Առաջարանի փոխարեն	1
2. Խորհրդների յերկրում սոցիալիզմ ենթ կառուցում	3
3. Կոլխոզներն—սոց. շինարարության ասպարիզում	5
4. Մանկամուրները—կոլանտեսություններում նպաստում են արդի ինպանի իրազորժման	7
5. Ինչ ե մանկամուրը: Ինչ էլքն խոսում նրա մասին առաջու այժմ	10
6. Կոլտնտեսություններում կազմակերպել ժամանակավոր մանկամուրներ	12
7. Ինչպես կազմակերպել կոլտնտեսություններում մանկամուրներ	17
8. Մանկամուրային կոմիտե	25
9. Ժամանակավոր մանկամուրները զարձնել մշտական	26
10. Ավելի լուրջ ուշադրություն մանկամուրների աշխատանքի վորակին	27
11. Մանիտարական մինիմում մանկամուրներում	30
12. Կոլտնտեսությունների մանկամուրներն ապահովել կազմերով	34
13. Կոլտնտեսություններում կազմակերպել կոնսուլտացիաներ, կաթնախճանոցներ	36
Հեղինակը շատ լայն կերպով ոպտվել ե մի շաբք զիխավորապես հետևյալ աղբյուրներից՝	

1. В помощь работникам сельских ясель, второе издание.
2. А. Богат—Ясли совхозов и колхозов в борьбе за производственный план.
3. Протоклитов—Нужны ли колхознице летние ясли?



№ 2691
Ա. Հակոբյան
Տեխ. редактор
Գ. Մարկարյան

Сд. в набор 20 VIII—1932 г.
Сд. в печать 25/X—1932 г.
Об'ем 2½печ. листа
Тираж 2000 экз.

Уполномоченного № 1702 Газ.-кн. тип. СККПО. Статформат А5-148+210 Заказ № 4342
Гор. Ростов на Дону.

«Ազգային գրադարան



NL0275720

2938/3

541021

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР



На армянском языке

ДОКТОР Г. БАРАНЬЯН

ОРГАНИЗУЙТЕ ДЕТЬЯМ ЯСЛИ

ИЗД. ВО „СЕВЕРНЫЙ КАВКАЗ“

ЧЕРНОМОРСКИЙ

ПРИВОЛЖСКИЙ, УПОЧЧОЧЧИЧИЩ ФЛР, 53
ЧРЧЧЕЦСВОХ (ЧЪКЧЧВЬСВР)